

ԶԻԿԼԵՐ



ԼԻՆԵՆԲ  
ԶԳՈՆ

891.71V  
Զ-60

ՊԵՏՆՐԱՏ

30 MAY 2011

ԳՊՐԿՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՅՎ. Դ/ Մ

Ձ-60

Զ Ի Լ Վ Ե Ր

Լ Ի Ն Ե Ն Ք Զ Գ Ո Ն

ԹԱՐԳՄ. Վ. ԴԱՐՅԱՆ

~~1930~~  
~~ՅԵՆԵ~~

ՅԵՆԵ  
ՕՆ

ԳՆՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

13 APR 2012



1472  
40

### ՀՐԾՏԵՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Խորհրդային հեռախուզության պանծալի գործունեությունը, վոր ուղղված է ժողովրդի բոլոր թշնամիների՝ լրտեսների, քնասարարների և զիվերսանաների մերկացմանը և արմատախիլ անելուն, խորապես հետաքրքրում և հուզում է մեր յերեխաներին: Խորհրդային ժողովուրդը և նրա յերեխաները—իրենց հայրենիքի բոցավառ հայրենասերները,—ոգնում են խորհրդային հեռախուզությանը՝ թշնամիների գեմ մղվող նրա ղժվարին պայքարում:

Ներկա ժողովածուի մեջ հավաքված են մի շարք պատմվածքներ ֆաշիստական հեռախուզության գործակալների նենգ մեթոդների մասին, այն գործակալների, վորոնց մեր յերկիրն են ուղարկում կապիտալիստական պետությունները: Պատմվածքներում ցույց է տրված այն հսկայական աշխատանքը, վոր կատարում են պանծալի ներքգործող կոմատականները և այն սերը, վորով շրջապատում է խորհրդային ժողովուրդը իր պանծալի խորհրդային հեռախուզությանը:

Այդ պատմվածքները, վոր զրված են կենդանի, փաստական նյութերի հիման վրա, կարող են պիտաներական ջոկատներում սեղի ունեցող զրույցների համար ծառայել վերպես լավագույն ձեռնարկ:

Հատուկ գործարաններից մեկի տեխնիկական վերահսկողութեան բաժնի ավագ ինժեներ Վիկտոր Ալեքսանդրովիչ Իգնատյուկը առնում էր իր արջկաճ Գալոչկայի ծնունդը:

Վեց տարեկան Գալոչկան, բարձրանալով հոր ծնկների վրա, հանդիսավոր կերպով հայտարարեց ներկա յեզոզներին, վոր այսօր նա մեծանում է մի ամբողջ ասարով և վոր գիշերը չպետք է քնի, վորովհետև ուզում է տեսնել, թե ինչպես է ինքը մեծանալու:

Աղմկում էին և ուրախանում: Անսպասելիորեն միջանցքում հնչեց զանգը.

— Ով կարող է լինել, — տարակուսանքով ասաց Իգնատյուկի կիներ և վեր կենալով զնաց միջանցք: Նրանք այլևս հյուրերը չեյին սպասում: Նա շուտով վերադարձավ: Նա անհանգիստ տեսք ուներ:

— Վիտյա, — կամացուկ դիմեց նա ամուսնուն, — քեզ ինչ-վոր մի կին էր հարցնում: Իմացավ, վոր մեզ մոտ հյուրեր կան, հրաժարվեց ներս մտնել: Նա խնդրեց հայտնել, վոր շտապ գործ ունի և կգա վաղը յերեկոյան ժամի ութին: Խնդրեց, վոր դու իրեն սպասես: Ո՞վ է այդ կինը, Վիտյա, — հարցրեց նա ամուսնուն:

Իգնատյուկը ուսերը թոթվեց:

— Գաղափար չունեմ: Կարող է պատահել հասցեն սխալվել է: Դու հաստատ իմացար, վոր նա ինձ մոտ էր յեկել:

Կինը գլխով համաձայնութեան նշան արեց:

— Այո, նրա մոտ մեր հասցեն եր, ըո աղբահուսներ նա ճիշտ տվեց:

Յենթադրուեթյուններ անելու ժամանակ չկար: Հյուրերը վեր եյին կենում սեղաններից, նվազ եյին խնդրում:

Հաջորդ որը սովորական աշխատանքի որ եր: Վաղ առավոտյան, քնած Գալոչկային համբուրելով Իգնատյուկները միասին գնացին աշխատանքի:

Ճաշի ընդմիջումին միայն կինը յերեկվա այցելուհուն հիշեց:

Աշխատանքից հետո նա մտնելով բաժին՝ ամուսնու մոտ, հիշեցրեց նրան «հյուրի» մասին, նախազգուշացրեց, վոր ինքը տանը չի լինելու, քանի վոր յերեկոները կուրսերում պարապում ե:

Յերեկոն վրա հասավ: Իգնատյուկը նստել եր տանը և սպասելով տարորինակ այցելուհուն՝ կարգում եր ու ջղայնանում:

Հարեան սենյակում աղջկա հետ աղմկում եր տնային աշխատավորուհին:

Ուղիղ ժամի ութին զանգը հնչեց: Իգնատյուկը դուռը բացեց: Նրա դիմաց կանգնած եր լավ հագնված, սե քողով պատած գլխարկը գլխին, բարձրահասակ, նիհար մի կին:

— Ընկեր Իգնատյուկին կարելի՞ յե տեսնել:

— Յես եմ Իգնատյուկը, — դռների մեջ կանգնած չոր կերպով արտասանեց ինժեները:

— Կարելի՞ ե անցնել ձեզ մոտ: Յես ձեզ չեմ ուշացնի, — փառք ինչ հեղանքով ասաց նա:

Իգնատյուկը հյուրի հետ միասին անցավ սենյակ:

— Յես ձեր յեղբոր մոտից եմ գալիս, — ցածր

ձայնով ասաց կինը, բարձրացնելով դեմքի սև քողը և ցույց տալով արդեն վոչ յերիտասարդ, կտրուկ և կանոնավոր դիմագծերով դեմքը: — Յես ձեր յեղբոր՝ Դմիտրի Ալեքսանդրովիչի մոտից եմ գալիս, — կրկնեց նա մի անգամ ևս:

— Միտիայի մոտից: Չի կարող պատահել... Միթե նա կենդանի յե, — շփոթված արտասանեց Իգնատյուկը:

— Կենդանի յե և առողջ, — ժպտաց այցելուհին:

— Բայց ինչո՞ւ յեր նա այդքան յերկար ժամանակ լուր: Չի՞ վոր տասնվեց տարի յե, վոր վոչ մի ջուր չկա: Ճակատ գնալուց հետո կորավ ու կորավ: Մենք բոլորս համոզված եյինք, վոր նա մեռել ե:

— Թույլ տվեք ինձ նստել, — արդեն համառորեն ասաց այցելուհին: — Ձեր յեղբոր պատմությունը կարճ ե, յես ձեզ չեմ ուշացնի...

— Ի՛նչ եք ասում, խնդրեմ, յես շատ ուրախ եմ, — շփոթված արտասանեց Իգնատյուկը աթոռն առաջ քաշելով:

— Ամենից առաջ թույլ տվեք ծանոթանալ:

Յես ձեզ արդեն գիտեմ: Իմ ազգանունս ե Վիտկովսկայա: Յես ձեր յեղբոր կնոջ քույրն եմ, կամ, ինչպես ասում են ձեզ մոտ, Դմիտրի Ալեքսանդրովիչի քեներն եմ:

— Դուք իրավացի յեք, — շարունակեց նա, — 1920 թվին Դմիտրին համարյա մեռած եր: Նա ծանր վերք ստացավ Սասնովիցայի տակ և գերի վերցվեց: Մոտ յերկու ամիս հիվանդանոցում պառկելուց հետո, մյուս պատերազմական գերիների հետ միասին Դմիտրին ևս ընկավ համակենտրոնացման ճամբար: Ձեր յեղբայրը,

վոր աչքի յեր ընկնում բազմաթիվ գերիների մեջ իբր գրագիտությամբ և ինտելիգենտությամբ, վայելում էր պետերի հատուկ հարգանքը, առանձնապես՝ կոռնետ Վիտկովսկու:

Միքանի ամիս ճամբարում մնալուց հետո Վիտկովսկին առաջարկեց նրան աշխատել իր կալվածում: Դմիտրի Ալեքսանդրովիչն ընդունեց այդ առաջարկը: Այդպես սկսվեց նրա նոր կյանքը: Այստեղ նա ծանոթացավ Յազովիգա Վիտկովսկայայի հետ, վորը հետագայում դարձավ նրա կինը: 1924 թվին ձեր յեղբայրը փոխեց հպատակութունը, իսկ 1929 թվին անցավ պետական ծառայության: Այժմ Դմիտրիին գազանի վոստրիկանության մեջ մեծ դործ ունի...

Վերջին բառերն արտասանեց շատ ցածր: Վիտկովսկայան չեր հեռացնում Իգնատյուկից իր շեշտակի ծակոզ հայացքը:

— Այժմ ձեզ հասկանալի յե թե ինչու նա այդքան յերկար ժամանակ չեր գրում: Փոստով կամ նույնիսկ վոչ այնքան մոտ մարդու միջոցով նամակ ուղարկել — այդ նշանակում էր վտանգի յենթարկել ձեզ և ձեր բնասնիքը: Ոտար պետության հպատակ և վոստրիկանական խոշոր պաշտոնյա յեղբոր հետ ունեցած կապը, — չէ՞ վոր այնքան ել հարմար ազգակցական կապ չե ձեզ, խորհրդային ինժեների համար... ճիշտ չէ՞ արդյոք:

Իգնատյուկը շմած նստած էր: «Յեղբայրը՝ խորհրդային քաղաքացիութունից հրաժարված: Վոստրիկանական պաշտոնյա, Ի՞նչ սարսափելի բան... Իսկ այս կինն ինչու յե այստեղ, Ի՞նչ նպատակով»:

— Յես ձեզ հետ լինելու յե՛մ տնկեղձ, — շարունակեց

Վիտկովսկայան, կարծես հասկանալով նրա մտքերը: — Մոտ որերս յես մեկնում եմ: Ձեզանից բարե կտանեմ Դմիտրիին, նույնիսկ՝ նամակ և այս բոլորը թող մնա վորպես ընդհանուրս ընտանեկան գաղտնիք, վոր կապում է մեղ միմյանց հետ հարյուրավոր կիրովները:

Վերջին բառերը Վիտկովսկայան արտասանեց ժպտալով, վեր կենալով և Իգնատյուկին հրաժեշտ տալով:

Դեռևս դռների մոտ Վիտկովսկայան թեթեակի հիշեցրեց, վոր Դմիտրին շատ ուրախ կլիներ, ստանալով յեղբորից յեթե վոչ նամակ, գոնե նրա նկարը մակագրությամբ:

Իգնատյուկը վերադարձավ սենյակ, վերցրեց գործարանի անցազրի համար պատրաստած նկարը, վրան միքանի բառ գրեց և հանձնեց Վիտկովսկայային:

Դուռը փակվեց, նա մնաց մենակ: «Պետք է պատմել կոնջս, իսկ վաղը հաղորդել գործարանի պետին», — անցավ նրա մտքով:

Հետո մոռացության տվեց այդ միտքը: «Ինչու: Ձե՞ վոր այդ մասին վոչ վոք չգիտե: Ամեն տարի բոլոր հարցաթերթերում, ինքնակենսագրություններում նա գրել է, վոր իր յեղբայրը քաղաքացիական կռիվներում մեռել է: Դեռ հայտնի չե, թե ինչպես կվերաբերվեն նրա այդ հայտարարությանը: Կմտածեն, վոր թագրել եմ: Վո՛չ, վո՛չ, լուել և միայն լուել...»

Անցան որեր: Գործերի, նոր հանդիպումների և դեպքերի հորձանուտում Իգնատյուկն սկսեց մոռանալ այս տարրինակ, նրա համար անախորժ տեսակցությունը:

Անցավ կես ամիս: Բերին և նրան անձամբ տվին մի նամակ: Իգնատյուկին խնդրում էին անցնել իրենց մոտ, հայտնում էին հասցեն, գրում, վոր Դիմալից նորություններ կան:

Իգնատյուկը գնաց: Յեվ այստեղ նրան ղեմավորող Վիտկովսկայան ու անծանոթ մի տղամարդ ուղղակի ասացին, վոր իրենք ԽՍՀՄ-ում են գտնվում և աշխատում են նրա յեղբոր հանձնարարությամբ:

— Դուք պետք է մեզ մի փոքր ոգնեք,— հայտնեց Վիտկովսկայան և սկսեց թվել գործարանի մասին մի շարք հարցեր, վորոնք հետաքրքրում էին լրտեսներին:— Յեվ չմտածեք հրաժարվել,— շարունակեց նա:— Ձեր յեղբոր հետ ունեցած կապը, վորը դուք թագցրել եք, ձեր նկարը, վերջպես այսօրվա ձեր տեսակցությունը,— այս ամենն ինքնին բավական համոզիչ են... Դե, չվիճենք, ավելի լավ է մնանք լավ և բարի ազգականներ,— վերջացրեց Վիտկովսկայան:

Յեվ... Իգնատյուկը համաձայնեց: Նա դարձավ պետության թշնամիների, լրտեսների բարեկամն ու աջակիցը:

Փոքրոգությունը և վախկոտությունը թույլ չտվին նրան կանգնելու իր սխալները անկեղծորեն և լրիվ ընդունելու միակ ճշմարիտ ուղու վրա:

Չունենալով բավականաչափ արիություն և ազնւրկություն պատուելու իր շուրջը հյուսված այդ վոտայնը, նա ավելի ու ավելի խճճվեց նրա մեջ և դարձավ հայրենիքի դավաճանն ու թշնամին:

Այսպես շարունակվեց մի քանի ամիս: Հանդիպումները կանոնավոր դարձան: Այն հանձնարարությունները, վոր արվում էին Իգնատյուկին, ավելի և ավելի պատասխանատու և լուրջ էին դառնում:

Մինչև վերջը խաբող, այդ բոլոր ուրերին յերկնաջանքով ապրող Իգնատյուկը հաճախ մտածում էր ինքնասպանություն գործել, սակայն շարունակում էր կատարել իր մութ գործը, լրտեսի և դավաճանի սարսափելի գործը:

Շուտով Իգնատյուկը բանտարկվեց:

Հետաքննության ընթացքում պարզվեց, վոր Իգնատյուկի յեղբայրը իրոք 1920 թվին, քաղաքացիական զուխների ժամանակ սպանվել է:

ԽՈՓՁՆՎԱԾ ԽՈՂ

Գարնեցկին կուսակցութեան վոչ յերիտասարդ անդամներից եր: Նա անցել եր հեղափոխական խոշոր ուղի, քաղաքացիական կռիվների տարիները, 1918—1919 թվերին ինտերվենտների գեմ մղվող մարտերում միջանի անգամ վերավորվել եր:

1936 թվին Գարնեցկին աշխատում եր խոշոր պաշտպանական նշանակութուն ունեցող տրեստի մի բաժնում, վորպես պետ:

Վերջին ժամանակներս Գարնեցկու մեջ ինչ-վոր թուլութուն առաջացավ:

Նա սկսեց սաստիկ խմել: Իր մտերիմների շրջանում հաճախ նա խոսում եր «մեծ և դժվարին կյանքից հետո փոքրիկ և արժանավայել հանգստի» մասին:

Նա դարձավ ռեստորանների մշտական հաճախորդը: Յերկու-յերեք բաժակակիցների—սովորաբար իր պաշտոնակիցների շրջանում նա իր ժամանակն անց եր կացնում մի շեշ գինու շուրջը:

Գարնեցկին համառ ու շատ աշխատող եր, սակայն և այնպես այնպիսի «մարտական» որեր եյին լինում, յերբ նա հնարավորութուն չեր ունենում բոլոր գործերը վերջացնելու:

Յեւ այդ ժամանակ Գարնեցկին, հակառակ տրեստում գոյութուն ունեցող ընդհանուր արգելքին, իր մեծ պորաֆելը պինդ լցնում եր թղթերով և տանում եր տուն աշխատելու:

Այդ կիշատակալից որը ևս Գարնեցկին վորոշեց ծառայութունից հետո տանն աշխատել:

Հարկավոր եր կարգալ, պատասխանել բոլոր շտապ գրութուններին, նամակներին և ծանոթանալ գործարանի պլաններին:

Գարնեցկին լավ յերեկո յեր: Գարնեցկին փողոցով դանդաղ գնում եր և մտածում, վոր վատ չեր լինի աշխատանքից առաջ մի փոքր «լիցք ստանալ»:

Փոքրիկ գարեջրատունը, ուր նա տուն վերադառնալիս հաճախ մտնում եր, հյուրընկալութեամբ բացեց նրա տոաջ իր գոները:

Շուտով արդեն նա նստած եր մի սեղանի մոտ, հաճույքով խմում եր սառը գարեջուրը:

Հետագա դեպքերն սկսեցին ծավալվել ավելի արագորեն:

Խոսք տանք իրեն Գարնեցկուն:

— Յես բավական շատ գարեջուր խմեցի: Իմ կողքին յերկու ինձ անձանութ անձնավորութուններ խոսք բացեցին պատերազմի մասին: Ին դիտեք, ելի, այսպես թե այնպես, յես հին գինվորական եմ: Չհամբերեցի, միջամտեցի խոսակցութեանը:

Վիճում եյին ռազմական տեխնիկայի մասին: Յեռ ստացի, վոր մեր տեխնիկան զգալի չափով ավելի լավ ե և բարձր, քան մյուս պետութուններում, և վոր կարիք չկա ինձ հետ վիճելու, քանի փոր յես սովյալ քնազավառում եմ աշխատում և այդ մասին բավական լավ գիտեմ...

Այս ամենը հետաքննութեան ժամանակ պատմելով, այնուամենայնիվ փոքր ինչ համեստութուն եր անում: Գարեջրատանը նա ավելի մեծ սնապարժութեամբ խո-

սոււ իր իր մասին և հպարտութեամբ խփելով պորտֆելին, ասոււ իր իրեն վստահացած խոշոր գաղանիքներ ի մասին:

Գարեջրատանը շատ ժողովուրդ չկար: Տաք վեճի ժամանակ Գարնեցիին ուշադրութեամբ չզարձրեց այն բանի վրա, թե ինչպէս նրա կիսահարբած դատողութեանները ուշադրութեամբ լսոււ ե հարեան սեղանի մոտ նստած քսոասուն-քառասունհինգ տարեկան լավ հագնված մի մարդ:

Հարեանի հետ ծանոթանալն սկսվեց հասարակ ձևով: Գարնեցիու սեղանի մոտ նստելով, անծանոթը միջամտեց խոսակցութեանը, ջերմ կերպով պաշտպանելով Գարնեցիուն:

Գարեջրատանը յերկու ժամն անցավ շուտ և անհատելի: Գարնեցիին և անծանոթը, վորն իրեն ներկայացրել էր վորպէս հաշվապահ Ժիրին, արդեն միմյանց հետ բարեկամներ եյին: Գարեջրատանից դուրս գալիս Ժիրինն իր նոր բարեկամի իրանը քնքշութեամբ գրկելով ասոււ իր.— դե, կանցնես ինձ մոտ: Ինձ մոտ հավաքվում են լավ ընկերներ՝ կոմունիստներ, պատասխանատու աշխատողներ... Ի դեպ, ինչո՞ւ այսպէս շուտ տուն գնանք: Հրաշալի կլիներ գնալ «Լիվորնո» ռեստորանը գոնե մեկ ժամ այնտեղ նստել:

Գարնեցիին փորձ արեց հրաժարվել. այսոր դեռևս նա հսկայական աշխատանք ունի:

— Դատարկ բան ե,— համոզում էր Ժիրինը: Այսոր քեզանից աշխատող դուրս չի գա: Գնանք, վաղն ավելի շատ կաշխատես:

Գարնեցիին սկզբում իրեն վատ էր զգում: Մտքում իրեն հայհոյում էր, վոր համաձայնեց գալ, բայց շուտով խղճի խայթոցներն անցան:

Ծառադայում նվազախումբը վերջում նվազեց ինչ վոր մի շատ հին վայր, վորը շատ շուտով փոխվեց քնչուական բարակ յերգի:

Բարեկամներն արդեն վոչ թե գարեջուր, այլ թունդ գինի եյին խմում:

Հաշվապահ Ժիրինը յերջանիկ պատահակատեթեամբ, ինչպէս ինքն էր ասոււ, այսոր և միայն դրամ ստացել և կարող և շուտով թույլ տալ բարեկամի հետ քառասունհիսուն ուրբի փող ծախսելու:

Անհկատելիորեն ժամերը թռչում եյին: Ժիրինը անդադար լցնում իր Գարնեցիու բաժակը: Վերջինիս գլուխն ավելի ու ավելի յեր պտտվում:

Նվազախումբն սկսեց նվազել պարի յեղանակ: Ժիրինը խնդրեց Գարնեցիուն, վոր նա պարի:

— Ով պարի չպարի, դու պետք է պարես, չե՞ վոր դու զինվորական ես, մի վախենա, լավ կպարես:

Գարնեցիին սաստիկ հարբած էր: Ժիրինը նրան թվում էր հասարակ, պարզամիտ մի յերբտասարդ:

— Ե՛հ, գիտե՞լ ասես չի յեղել: Յած դնելով պորտֆելը, որովիւր վեր կացավ սեղանից: Հինգ-տասը րոպե ճարպկորեն պարեց, ռեստորանի հարբած այցելուներ ի մեջ ծիծաղ և ծափահարութեաններ աստիճանելով:

Կարճատակած և դո՛հ նա հետ դարձավ սեղանի մոտ: Ժիրինն այլևս չկար: Գարնեցիին մտածելով, վոր իր բարեկամը հիմա կգա, հանգիստ նստեց ու սպասում էր:

Գինով մթազմած գիտակցութեան միջով վոչ մի կասկած չէր անցնում: Նրա գլուխը պտտվում էր:

Չգուցում եր մի փոքր դուրեկան հոգնածութուն: Մի-  
քանի բույն հետո միայն նա հիշեց պորտֆելի մասին:  
Կատարվածի ահուկիութունը Գարնեցկուն շմեցրել  
եր: Նրա ճակատը ծածկվեց թեթև քրտինքով:

Նա վեր թռավ տեղից, նայեց շուրջը: Վոչ, ժիրինը  
չէ յերեվում:

Վազեց հանդերձարան: Հանդերձապահը քաղաքա-  
վարի կերպով առաց, վոր Գարնեցկու բարեկամը, վորի  
հետ նա յեկել էր, դուրս է յեկել տասնհինգ բույն  
առաջ:

Գիշերվա մնացած մասը մղձավանջային էր: Գար-  
նեցկին կնոջը վաչինչ չեր ասում. նա անհամբերապա-  
սում էր լույսը բացվելուն, թեև չէր պատկերացնում,  
ինչ անել, ինչ չանել:

Առավոտյան ժամը յոթին զանգը հնչեց: Նա յե-  
ռանգազին վերցրեց փողակը:

— Այո, այո, յես եմ, Գարնեցկին:

Ժիրինի ձայնն էր.

— Դու, յեղբայր, ներիք ինձ: Պարզ ասած, ինքս  
չգիտեմ ինչպես այդ պատահեց: Սաստիկ հարբած եյի:  
Հարբած վիճակում ել քո պորտֆելը վերցրել եմ: Նե-  
րիք, ստիպված եյի տեսնել քո հասցին և հետախուսը:  
Ձեք բախտից պորտֆելի մեջ դրա ձեք հուշատեսարը:  
Ահա և զանգահարեցի...

Գարնեցկին յերջանիկ էր: Նա հանդիպելով ժի-  
րինին ճանապարհին, աշխատանքի գնալիս, անկեղ-  
ծորին թոթվեց նրա ձեռքը: Յերկուսն էլ ծիծաղեցին  
պատահածի վրա: Պայմանավորվեցին հանգիպել:

Բայց Գարնեցկու սիրտը կասկած ընկավ: Նրան  
սկսում էր ավելի և ավելի պարզ կերպով թվալ, վոր

ժիրինը այն գիշեր հարբած չէր: Նա իր հիշողության  
մեջ մի առ մի վերականգնում էր բոլոր դեպքերը և նրա  
կասկածները սաստկանում էին:

Վերջապես, չհամբերեց: Վեր կացավ, արագությամբ  
ծածկեց սենյակի դուռը և արագ քայլերով, կարծես  
վախենալով, վոր կարող է իր միտքը փոխել, դուրս յե-  
կավ:

Կարճ ժամանակից հետո նա նստած էր ՆԳԺԿ  
քննիչի առանձնատանյակում և մանրամասն պատմում  
էր պատահածի մասին:

Յերկու ուր հետո զրույց տեղի ունեցավ նաև  
«հաշվապահ» ժիրինի հետ, վորը, ինչպես պարզվեց,  
ոտարերկրյա հետախուզության գործակալ էր: Իր  
սեփական խոստովանությամբ, նա կարողացել է ժա-  
մանակին հանել իրեն հարկավոր փաստաթղթերի  
պատճենները:

Սակայն լրտեսը սխալ է արել մեծ խաղ խաղալու:  
Նա վերադարձնելով պորտֆելը նկատի յե ունեցել  
գրանով վերջնականապես ձեռք բերել Գարնեցկու վըս-  
տահուլթյունը և հետագայում ավելի լրիվ չափով ող-  
տագործելու նրան:

Սակայն խաղը զլուխ չեկավ: Գարնեցկին կատարե-  
լով մի սխալ, վորը մոտ է հանցագործության, վերջի-  
վերջն արիւթյունն ունեցավ անկեղծորեն պատմելու  
պատահածի մասին, վորով և ոգնեց բռնելու և մեր-  
կացնելու լրտեսին:

3741  
40



## ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՆՃԵՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԸ

Յես ինստիտուտն ավարտեցի վորպես գերազանցիկ: Ժողովմատի բաշխման համաձայն ինձ ուղարկեցին պաշտպանական նոր գործարաններից մեկում աշխատելու:

Դործարան մեկնելիս ինձ նախազգուշացրին, վոր այնտեղ ամեն բան կարգին չէ: Վթարուճներ, պարապուրդներ, սարքավորման փչացում, պլանների անընդհատ թերակատարում—այս ամենը գործարանում հաճախակի յերևույթներ են:

Դործարանի դիրեկտորն ինձ սիրով ընդունեց: Բանից պարզվեց, վոր նրան վաղուց էլ ինստացել ինժեներ ուղարկել:

— Յերկար սպասեցի,— խոստովանեց նա:

Նրա հետ գործարանի գործերի մասին քիչ խոսելուց հետո յես համոզվեցի, վոր նա այդ բոլորից քիչ բան է հասկանում:

Նրա հետ միասին մենք գնացինք տեխնիկական դիրեկտորի մոտ:

Վոչ— յերիտասարդ ինքնավստահ տեխնիկական դիրեկտորը հենց սկզբից ինձ նախազգուշացրեց.

— Նկատի ունեցե՛ք, վոր մեր գործարանը գործարան չէ, այլ հսկայական եկապերի մենտալ լաբորատորիա: Աշխատանքը նոր է: Բնական է, վորոչ թերություններ և սխալներ կլինեն:

Արդեն մյուս օրը յես անցա ցեխն աշխատանքի: Որերն անցնում էլին: Այն բանվորները, վորոնց հետ յես գործ ունեյի, ամեն օր ոգնում էլին ինձ ծանոթանալու իջերի դրությանը:

Յես պարզ կերպով սկսեցի հասկանալ, վոր անհրաժեշտ է աշխատանքի արմատական բարեփոխում կատարել: Հարկավոր էր փոխել վառարանների ուժի մը, վորոնք գոյություն ունեցող շահագործման պայմաններում քանդվում էլին և ավարիայի վտանգ էլին սպառնում: Յեխում, ապա ուրեմն և գործարանում, պայթեցման մշտական վտանգ կար: Սխալ էր դասավորված նաև բանվորական ուժը:

Յես մանրադնին կերպով այս հարցերն ինքս իմ մեջ քննության տուա և, վիրջապես, վորոչեցի խոսել տեխնիկական դիրեկտորի հետ:

Վերջրի արածս հաշվարկումներն ու հաշվումները և գնացի նրա մոտ՝ առանձնաանյակ թե՛ հապն, այսպես և այսպես, Վասիլի Խրիստոֆորովիչ, հարկավոր է շատ բան փոխել: Միայն այդ դեպքում աշխատանքն առաջ կգնա: Հակառակ դեպքում հոգս կցնդենք:

Բայց Վասիլի Խրիստոֆորովիչը մի տեսակ նենգորեն ժպտաց և ասաց.

— Ձանել եք ու խակ: Բարդ գործերը շատ շուտ եք լուծում: Դե, լավ, թողեք ինձ մոտ այս նյութերը, յես կնայեմ, իսկ դուք մի յերկու օրից հետո անցե՛ք ինձ մոտ տուն, կխոսենք:

Թողեցի Դրա մոտ իմ բոլոր նյութերը և գնացի: Սակայն նրա խոսակցության տոնը և ժպիտն ինձ դուր չէկան: Մտածեցի անցնեմ ժողովմատ, խոսեմ, խորհուրդ հարցնեմ: Հենց նույն օրը յես անցա ժողովմատ, հայտնեցի իմ կասկածների մասին:

Ժողկումատից զանգահարեցին՝ ուր հարկավոր եր և յես ուղեվորվեցի ասնտեղ ու հաղորդեցի իմ մտածմունքները:

Յերկու օրեց հետո յեկա տեխնիկական դիրեկտորի մոտ: Նա մենակ չեր: Նրա մոտ նստած եր մի վոմն ուսարեկրացի: Ծանոթացանք: Պարզվեց, վոր ոտարեկրացին այն ֆիրմայի ներկայացուցիչն եր, վորեց մենք վորոշ սարքավորումներ ենք գնում: Քիչ նստեցինք, խոսեցինք զանազան յերկրորդական գործերի մասին: Ոտարեկրացին յեռանդազին հրավիրում եր մեզ գործնական արն ավարտել պատրաստում:

Վասիլի Խրխատոֆորովիչը բոթում եր իմ կողքին, թե հրաժարվելն անհարմար է, պիտանի մարդ ե...

Գնացինք: Յեկ ձանապարհին նա ասում է.

— Գալցի, ճաշարան չգնայինք, այլ ինձ մոտ, հյուրանոց: Կնստենք ինձ մոտ, ժամանակ կանցկացնենք:

Գնացինք նրա մոտ: Ճաշարանից բերին դինիններ, խորտիկներ: Գինգ խմեցինք: Տեսնեմ՝ բարեկամներս անընդհատ իմ բաժակը լցնում են: Ոտարեկրացին միշտ խփում է իմ ուսին, «Հիանում եմ, — ասում է, — ձեր յերիտասարդ մասնագետներով, շուտով դուք մեծերեց կանցնեք»: Իսկ Վասիլի Խրխատոֆորովիչը արագությամբ վերցնում է ոտարեկրացու «Եղիպան» և առաջարկում.

— Յեկեք, յես ձեզ նկարեմ:

Ոտարեկրացին ինձ ավելի մոտեցավ և Վասիլի Խրխատոֆորովիչը մեզ նկարեց:

Մենք շատ ուշ վերագարձանք:

ձանապարհին՝ իբր թե պատահմամբ, յես հարցնում եմ Վասիլի Խրխատոֆորովիչին.

— Իսկ յե՞րբ ենք գործերի մասին խոսելու:

— Վեր գործերի մասին, — զարմացավ նա:

— Ե՛հ, գործարանի, ցեխի աշխատանքի մասին:

Այն նյութերի մասին, վոր յես ձեզ հանձնեցի:

Յեկ այստեղ Վասիլի Խրխատոֆորովիչը սկզբում ակնարկներով, իսկ հետո ուղղակի ինձ ասաց հետեվյալը.

— Ձեր հաշվումներն ու պլանները այժմ ինձ մոտ չեն: Յեռ դրանք չեմ ել ստացել ձեզանից: Բոլոր այդ նյութերը, վորոնք ցույց են տալիս մեր գործարանի կարողությունը և այլ գաղանի ավյալներ, այն ոտարեկրացու ձեռքում են, վորի մոտ մենք յեղանք..

Այն մասին, վոր նա միայն ֆիրմայի ներկայացուցիչ չե, ձեզ համար պետք է պարզ լինի... իսկ ձեր այստեղ լուսանկարը, վորտեղ դուք նրան քնքշությամբ գրկած՝ նստած եք, գտնվում է ինձ մոտ:

Այս բոլորը նա ասում եր նենգ ժպտը դեմքին:

Ձեր ցեխի աշխատանքներում մենք վոչ մի փոփոխություն չենք կատարի: Հասկանում եք: Ձե՛նք. կատարի: Այդ հարկավոր չե:

Նա անգամ վերջին բառերը շեշտեց:

— Ձեզ համար պետք է պարզ լինի, — շարունակեց նա, — վոր ձեր սեփական ձեռքով գրած նյութերը գտնվում են մեզ մոտ... Լուսանկարը նույնպես վորեք նշանակություն ունի... — Հետևեց լուսնյակ — Գիտե՞ք ինչ: Յեկեք միասին աշխատենք:

Յեռ քիչ մնաց այդ անզգամին խփելի:

Ըստ յերեուկի իմ լուսնյակն ընդունելով իբրև համաձայնության նշան, լրտեսը շարունակեց.

— Յես գիտեմ, վոր նյութականի կողմից ձեր գրութիւնն այնքան ելփայլուն չե: Ահա ձեզ առայժմ:

Նա հանեց իր գրպանից միքանի հարյուրներ և մեկնեց ինձ: Յես դրամն ընդունեցի: Վորոշ ժամանակից հետո մենք բաժանվեցինք:

Հենց այդ գիշեր յես պատահած դեպքի մասին հաղորդեցի: Յես կատարեցի իմ պարտքը հայրենիքի հանգեալ:

## ՄՈՐ ՀԻՇԱՅԱԿԸ

Սոնյան հատուկ նախագծման ինստիտուտներից մեկում աշխատում եր վորպես գծագրուհի: Նա շքեղ հագնվելու և պարելու մեծ սեր ունի և ռեստորաններէ մշտական հաճախորդն եր:

Մեկ անգամ Սոնյայի ընկերուհին նրան ծանոթացրեց մի ոտարերկրացու հետ: Ծանոթութիւնը տեղի ունեցավ ռեստորանում, վորտեղ նրանք ընկերներով գտնվում եյին: Ոտարերկրացին բոլորովին ազատ խոսում եր ուսերեն, լավ պարում եր: Յերեկոն անցկացրին միասին: Սոնյան շատ գոհ եր այդ հանդիպումից: Պայմանավորվեցին մի անգամ ևս հանդիպել:

Միքանի ուր հետո ընկերուհին հայտնեց Սոնյային, վոր իրենց ծանոթ այդ ոտարերկրացին այսօր իրենց հրավիրում և իր մոտ: Աղջիկն ուրախութեամբ համաձայնեց և յերեկոյան նրանք հյուր զնացին:

Տանտերը նրանց շատ լավ հյուրընկալեց: Շատ գինի և մրգեր կային:

Պարելուց, խմելուց հետո, տանտերն առաջարկեց հյուրերին նայել իր կոլեկցիան: Նա հրաշալի իրեր ունի: Գեղեցիկ վոսկյա մատանիներ, հազվագյուտ ձևի ձեռքի ժամացույցներ, շնորհալի ձեռքով պատրաստված թանգարժեք փոքրիկ արձաններ և բազմաթիւ այլ հազվագյուտ մանր-մուկ իրեր:

Ոտարերկրացին խոստովանեց, վոր ինքը մուլեանդ

կոեկցիոններ ե, և այդ բոլորի վրա նա անադին փոսկեր  
եծախառնմ:

Սոնյան հիանում էր շքեղ իրերով, նա միքանի  
անգամ բոլոր իրերը դիտեց: Ընկերուհին, վոր նստեղ  
էր նրա կողքին, հանկարծ հիշեց, վոր նա պետք է  
տունը գանդ տար:

Թուշլավություն խնդրեց տան տիրոջից հեռա-  
խոսով խոսելու, վոր կախված էր միջանցքում:

Ոտարերկրացիին շատ քաղաքավարի յեր, նա նույ-  
նիսկ նրան ուղեկցեց:

Սոնյան անց մենակ: Միքանի րոպե հետո  
տանտերը վեր ադարձավ, քիչ անց նրա հետևից ներս  
մտավ նաև ընկերուհին:

Մեկ ժամ ետ նստելուց հետո, աղջիկներն սկսեցին  
պատրաստվել տուն գնալու:

Յերբ դուրս յեկան, արգեն ուշ էր: Միծաղելով և  
զրուցելով գնում էյին գեպի տրամվայր: Սակայն դեռ  
կես կվարտալ չեյին անցել, յերբ իրենց հետևից լսեցին  
արագ քայլեր: Շնչակտուր, առանց գլխարկի, նրանց  
հետևից վազում էր ծանոթ ոտարերկրացին, վորը շատ  
հուզված էր: Նա ներողություն խնդրելով պատմեց,  
վոր իրերից պակասում է իր համար շատ թանգա-  
գին մի փոքրիկ բան: Նա ասաց, վոր այդ իրը բացի  
իր արժեքից, թանգագին է նաև վորպես մոր հիշա-  
տակ: Նա հասկանում է, վոր այդ, իհարկե, նրանց  
կողմից մի կտտակ է, բայց, թախանձագին խընդ-  
րում է վերադարձնել այդ իրը:

Սոնյան շփոթվեց: Նա մեքենայորեն ձեռքը տա-  
րավ վերարկուի գրպանը: Զգաց, վոր ձեռքը ինչ-վոր  
սառը, մետաղյա բանի գրպավ: Հանեց: Ի՞նչ սարսափ  
բան: Նրա ձեռքում փայլում էր այն Փիզուրան, վորի

մասին ոտարերկրացին ասում էր: Յերբ, ի՞նչպես այն,  
ընկավ իր գրպանը: Ընկերուհին դայրացած ուսերը  
թոթվեց, շուռ յեկավ ու գնաց: Մնացին յերկուսով:  
Յեվ այստեղ ոտարերկրացին վերջացրեց իր սկսած  
խաղը:

Նա առաջարկեց մոռանալ ամբողջ այս անախորժ  
պատմությունը, միայն մի պայմանով... Սոնյան պետք  
է նրան միայն մի յերեկոյի համար տար վորոշ գծա-  
զրեր: Յեվ թվեց, թե հատկապես ինչպիսի գծազրեր:

Ոտարերկրացին նախազգուշացրեց, վոր նա կարող  
է ընկերուհու կողմից չանհանգստանալ, քանի վոր  
նա կաշխատի նրան համոզել և ամեն ինչ կձածկվի:

Լրտեսն առատաձեռն էր: Նա նույնիսկ Սոնյային  
նվերից այն փոքրիկ իրը, վորն իբր թե, գողացել  
էյին իրենից:

Սխտեմաստիկ լրտեսական կապն այսպիսի նենդ,  
չարամիտ միջոցներով է հաստատվում: Այդ կապը հե-  
տագայում ոտարերկրացու կողմից ամրապնդվում է  
մանր նվերներով և զանազան ընծաներով:

Վերջում, յերբ լրտեսները մերկացվեցին, պարզվեց  
նաև այդ ընկերուհու դերը:

Նա յեղել է յերերուն, անկայուն մարդկային  
նյութ վորոնող և մատակարարող, ինչպիսին է Սոնյան,  
վորին այդպես հմտորեն ոգտազործում է թշնամին:

## ԴԱՍԱՏՈՒՆ

Մի գործարանում ինժեներ-տեխնիկական աշխատողների համար կազմակերպվել էր գերմաներեն լեզվի ուսուցման սիրություն խմբակ:

Յերեկոյան, աշխատանքից հետո, խմբակի անդամները հավաքվեցին կարմիր անկյունը առաջին պարապմունքին:

Շուտով յեկավ նաև դասատուն: Նա ճշտապահ, կարճիկ մի ծերուկ էր, յեղջուր է շրջանակով ակնոցներով, շատ շարժուն և ծիծաղկոտ:

Յերբ գործարանային կոմիտեյի անդամը ծանոթացրեց նրան ապագա աշակերտների հետ, ծերուկն արտասանեց փոքրիկ և բոլորին հաճելի մի ճառ:

Նա ասաց.

— Շատ ուսուցիչների մեթոդներ սխալ են և հարկ յեղած արդյունքը չեն տալիս, առաջին հերթին նրանց այն ցանկություն պատճառով, վոր նրանք կամենում են միանգամից ամեն ինչ ընդգրկել: Չկանպատակադրում:

Իմ կարծիքով, անհրաժեշտ է հենց սկզբից ուղղութունը վորոշել և նրանով խստորեն առաջնորդվել: Յես կարծում եմ, վոր չեմ սխալվի, — ծերուկը ժի հայացք նետեց ներկա յեղողների վրա, — յեթե առաջարկեմ ուկնդիրների ներկա կազմին, իսկ ձեր մեծամասնությունը, ինչպես ինձ հայտնի յի, ինժեներներ և

տեխնիկներ են, — յես չեմ սխալվի, — կրկնեց նա, — յեթե առաջարկեմ ձեզ ուսուցման արտադրական ուղղութունը:

Հավանություն բացականչություններն ընդհատեցին դասատուի ճառը:

Մենք պետք է արտադրական թեմաների սահմաններից դուրս չգանք: Այդ կարագայնի ուսման ընթացքը և արդեն իսկ ամենամոտ ապագայում զգալի ոգնություն ցույց կտա ձեր աշխատանքին:

Դասատուն փոքր ինչ լուրջությամբ հետո շարունակեց.

— Յես բավական մեծ մանկավարժական փորձ ունեմ: Յես բազմաթիվ խմբակներ եմ դեկավարել և գիտեմ, վոր չի կարելի հույս դնել սովորողների միատեսակ կազմի վրա: Յեվ ձեզ մոտ, ինչպես մյուս խմբակներում, կլինեն հետ մնացողներ: Այդ պատճառով յես նախազգուշացնում եմ, վոր հավանական է ձեզանից միքանիսը, բացի խմբակում կատարվող աշխատանքից, հնգորյակում մեկ-յերկու ժամ ևս նվիրեն իմ անհատական պարապմունքներին, վորպեսզի մյուսներից հետ չմնան:

Դասատուի հետ ծանոթանալուց ուկնդիրները շատ զոհ ելին: Դոհ էր նաև գործարանային կոմիտեյի անդամը:

Պարապմունքներն սկսելուց առաջ դասատուն անցկացրեց յուրահատուկ փոքրիկ քննություն-ստուգում՝ թե յուրաքանչյուր ուկնդիր ինչ չափով է տիրապետում լեզվին:

Յուրաքանչյուր սովորողի նա տվեց միքանի հարց և առաջարկեց նրանց պատասխաններն իսկույն ևեթ տալ գրավոր կերպով:

Այսպիսի հարցեր եյին տրված.

Ո՞վքեր են նրանց ծնողները:

Քանի տարի յեն աշխատում գործարանում:

Ի՞նչ պաշտոն ունեն:

Ի՞նչ աշխատանք են կատարում:

Ստացված պատասխանները դասատուն խնամքով դրեց պորտֆելի մեջ, հայտնելով, վոր հաջորդ պարապմունքին նա արդեն բավական լավ կգիտենա խմբակի կազմը և ուկնդիրներն զիտության մակարդակը:

Այսպես սկսեց աշխատել խմբակը:

Մեկ ամսից հետո անցկացվեց առաջին գրավոր աշխատանքը: Սովորողները գրեցին շարադրություն դասատուի առաջարկած «Մեր գործարանը» թեմայով:

Դասատուն պահանջում էր խնամքով շարադրել՝ ոգնելով նրանց, ովքեր դժվարանում էյին թեւադրության ժամանակ համապատասխան բաւեր գտնել:

Սովորողներն աշխատում էյին բարեխղճօրեն, շարադրելով իրենց գրավոր աշխատանքում այնպիսի տեղեկություններ և փաստեր, վորոնց հաղորդումը այլ հանգամանքներում իրենք թերևս համարելիս դադարի տվյալները հրապարակում:

Ժամանակն անցնում էր: Ծերուկ դասատուն գործարանում դարձավ տանու մարդ: Նա մասնակցում էր պատի թերթում, կանոնավոր լուսաբանում էր խմբակի աշխատանքը, շարադրում էր գործարանի բանվորներին ուսուցման մեջ ընդգրկելու լայն պլաններ:

Մի պարապմունքի ժամանակ դեկավարն ասաց, վոր խմբակի ուկնդիրներ՝ ինժեներ Վասիլը և տեխնիկ Ռուբինչիկը հետ են մնում, և վոր այդ կապակցությամբ խմբակը կարող է իր պլանը չկատարել:

Դասատուն անհրաժեշտ էր համարում այդ յերկուսի հետ լրացուցիչ կերպով պարապել, նույնիսկ յեթե գործարկումը հրաժարվի այդ ժամերը վարձատրելուց:

— Ինձ համար, վորպես հասարակական աշխատող-մանկավարժի,— ասաց նա,— ամենից կարևորն է, վոր իմ դեկավարած խմբակն իր պլանը լիովին կատարի, իսկ ինչ վերաբերում է փողին, այդ յերկրորդական բան է:

Գործարկումը համաձայնեց և լրացուցիչ պարապմունքներն սկսվեցին:

Վասիլյեվը և Ռուբինչիկը, գործարանի ամենակարևոր և ամենից գաղտնի ցեխերի աշխատողները շատ լեռանդուն աշակերտներ դուրս յեկան:

Դասատուի ունեցած զրույցների թեմաները և կատարվող աշխատանքներն էլ ավելի կոնկրետ դարձան՝ «Իմ ցեխը», «Ինչ տվինք մենք այս տարի», «Ինչպես ենք մենք պայքարում վորակի համար», «Մեր գործարանն ու յերկրի պաշտպանությունը» և բազմաթիվ այլ նյութեր:

Շատ էյին աշխատում Վասիլյեվը և Ռուբինչիկը:

Կորցնելով չափի ամեն տեսակի դժգոհմունք, մոռանալով ուսգծական գաղտնիքի մասին, նրանք իրենց բանավոր և գրավոր պատասխաններում շարադրում էյին տեղեկություններ արտադրական ծրագրերի, արտադրանքի, սարքավորման դրության և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Ծերուկ դասատուն արժանանալով գործարանային կոմիտեյի գովասանքներին, իր ծառայություններն առաջարկեց մի ուրիշ ուսգմական գործարանի և ակսեց այնտեղ աշխատել:

Նա իր «մանկավարժական» գործունեութիւնը հաջողութեամբ անց եր կացնում և՛ այստեղ, և՛ այնտեղ։ Բայց կարճ ժամանակից հետո, ծերուկին բանտարկեցին։

... Յեկ գործարանի աշխատողները, առաջին հերթին խմբակի ուկնդիրները, վորոնք տառապում էին ապուղջային հիվանդութեամբ—անհողութեամբ, անկեղծորեն զարմանում էին, վոր իրենց կողմից այգքան հարգված «անշառ» ծերուկ-դասատուն դուրս յեկավ փորձված լրտես, խորհրդային պետութեան արգահատելի թշնամի։

## ՏԻԿՆԻԿԸ

Դեպքը տեղի յե ունեցել խորհրդային հարավային նավահանգիստներից մեկում։

Հանգստյան օր եր, արևային և շոգ։ Զբոսնողները խմբերը թափվել էին ծովափ, զբոսնում առափնյա ծառուղում։

Նավահանգստին մոտենում եր մի նավ։

Նա ոտարերկրյա տուրիստներ եր բերում։

Նավը պետք է նավահանգստում կանգնեւր ընդամենը մեկ ժամ և շարունակեւր դնալ իր մարշրուտով ավելի և ավելի մոտենալով յերկրի սրտին։

Մովափին շատ ժողովուրդ կար, ճարպիկ տղաները ֆոռալով սրան-նրան առաջարկում էին կոշիկ մաքրել, և դրա հետ միասին կարող էին ծովի մեջ սուզվել, յեթի վորևէ մեկը արծաթ դրամ գցեւր նրա հատակը։ Մովափի մշտական լուսանկարիչները իրար էին հրում նկարների հսկայական կույտով և հարավային բազմապիսի լուսանկարներով։ Սկզբի վերևում, համարյա ուղղակի ծովափին մոտիկ, նեղ յերկար նստարանի վրա տեղավորվել էին յերեք հոգի։ Ինչպես յերևում եր, դա մի ընտանիք եր։ Հայրը, վոր բարձրահասակ, ամուր կազմվածքով մի տղամարդ եր, քաղաքացիական նավատորմի ծառայողի համազգեստով, ծխում եր յերկար տարորինակ ձևի ծխամորձ։ Նրա կողքին նըստած եր արդեն հասակն առած, լավ հագնված մի կին,

վորը ձեռքին բռնել եր շքեղ դարգաարված մի մեծ տիկնիկ:

Նստարանի մոտ, տաս ասրեկանի չափ մի աղջիկ ավազի վրա ինչ վոր բան եր դժադրում:

Բիշ հեռու, բազրիքին կրթնած կանգնած եր համեստ հագնված մի մարդ: Ծուլորեն ծխելով, նա դիտում եր մոտեցող նավը:

Շչակը սուր կերպով շչաց: Նավը կանգ առավ և ալիքները վրա ոքորվեց:

Տախտակամածի վրա խռնվեցին ուղեվորները, լավեցին ծիծաղի ձայներ, վողջույններ: Վամանք նավահածանքով շապում էյին գեպի նավահանգիստը:

Ափին կանգնած մարդը հունկարժակի աշխուժացավ: Նա տեսավ այն անձնավորությանը, վորին սպասում եր:

Ափ իջավ բարձրահասակ, գեր ոտաբերկրացի մի կին: Նրա հետ գնում եր մի աղջիկ: Կինը ձեռքին ունեւր մի տիկնիկ:

Մարդը ժպտաց: Աչքի տակով նայելով հարևան նստարանին, նա նկատեց, վոր նստարանի վրա նստածներն աշխուժացան, տեղերում շարժվեցին: Տիկնիկը դնելով նստարանի վրա, կինը նայեց ժամացույցին:

Ռտարերկրացի կինն աղջկա հետ, վոր իջել եր նավից, դանդաղ բարձրանում եր գեպի սկզվերը: Այնտեղ, վորտեղ նստած էյին յերեք հոգին, այդ նստարանի մոտ նրանք կանգ առան:

Իրմելով աղջկան, կինը ոտաբ լեզվով ասաց:

— Ե՛լդա, սիրելիս, գնա գնիր այս հրաշալի քաղաքի տեսարանների նկարներից, իսկ յես կնստեմ այս-

տեղ: Ծովի սրբորումից հետո դուրս քիչ պտույտ և զալիս:

Աղջիկը գնաց:

Կինը նստեց նստարանի վրա և հողնած շարժումով իր կողքին դրեց տիկնիկը: Այժմ յերկու տիկնիկներն ևլ դրված էյին իրար կողքի:

Բիշ անց աղջիկը յեկավ: Նա բերեց միքանի լուսանկարներ, բայց մայրը նույնիսկ նրանց վրա չնայեց:

— Դե, այժմ նավ գնալու ժամանակն է:— Նավեր կացավ և վերցրեց տիկնիկը, բայց վոչ թե իրենը, այլ մյուսը, վորը դրված եր նրա կողքին: Փոխանակումը կատարվեց միանգամայն աննկատելի և աննշմարելի կերպով:

Բայց այն մարդը, վոր կանգնած եր քիչ հեռու, տեսավ:

Նա անփույթ քայլվածքով, վոր իբր թե դրոսանքի յեր գուրս յեկել, հետեց գնացողներին:

Չեկիստի սրատես աչքը չխաբեց: Այն տեղեկությունները, թե ոտաբերկրյա տուրիստի անվան տակ ոտաբ յերկրյա լրտես է գալիս, հաստատվեցին ոտաբերկրացի կնոջ հանձնված տիկնիկի մեջ թաղնըված էյին գաղտնի լրտեսական տեղեկություններ: Հանձնման ձեռք մատժված եր սրամտորեն ու հասարակ բայց չեկիսատեղան զգոնությունը խորտակեց լրտեսների պլանները: Թշնամիները մերկացվեցին և բանաւարկվեցին:

«ԵՌԻՆՈՒ ՀԱՄԻՐ»

Ռազմական գործարանի տեղամասում բռնվեց մի անծանոթ մարդ: Պարզվեց, վոր նա խուլուհամր է:

ՆԳՃԿ ուսյոնական բաժանմունքում խուլուհամրը ձեռքերի և դեմքի շարժումներով բացատրեց, վոր պատահամբ է ընկել գործարանի տեղամասը: Թափառելով ու մտրալով նա իր համար գեղեցիկու տեղ է փնտռելիս յեղել և աննկատելիորեն ընկել է այնտեղ: Այս բացատրությունները բացարձակորեն հնարովի էին: Սակայն, այնուամենայնիվ վոչ մի հանցանշան, վոչ մի բան չկար, վորով կարելի լիներ ապացուցել, թե այդ մարդը գործարան է մտել այլ նպատակներով:

Քննիչը բռնվածի հետ յերկու ժամից ավելի աննպատակ քարշ յեկավ: Վերջապես կարգադրվեց խուլուհամրին ազատել:

Քննիչը յերկրորդ անգամ իր մոտ կանչեց խուլուհամրին, միքանի հարց ավեց, և բացի անմիտ ձայներից ու գլխի անզոր շարժումից նրանից վոչ մի պատասխան չստանալով բարձր ձայնով հայտարարեց:

— Դե լավ, հրաման կա ձեզ ազատել, հիմա կբերեն ձեր իրերը: Մյուս անդամ, զգուշացեք, քարշ չդաք գործարանի տեղամասում:

Հետո նա փորձեց նույնը բացատրել նաև նշաններով:

Խուլուհամրը նստած էր անտարբեր և միայն քիչ ճեռո, յերբ նա սկսեց հասկանալ քննիչի շարժ ու ձևից, թե ինչ է ասում, ուրախ կերպով ինչ վոր բան մրմնջաց և գլխով նշան արեց:

Խուլուհամրը ազատ արձակվեց: Ամբողջ որը նա Թափառում էր քաղաքում, թրև էր գալիս շուկայում և վողորմություն խնդրում:

Նա ուշ յերեկոյան քաշվեց քաղաքի ծայրամասը: Թակեց ցածրիկ ու փոքրիկ մի տան պատուհան, թաղիքով ծածկված դուռը ձռնչյունով բացվեց և նա անհետացավ դռան հետևը: Իսկ յերկու ժամ հետո անակից դուրս յեկավ մի հասակավոր տղամարդ, յերկար հնաձև վերարկուով և կեպիով: Տղամարդն ունեւր շիկավուն բեխեր և նույնպիսի փոքրիկ միրուք:

Շտապ ու թափ-թափ քայլերով նա գնում էր կայարանի ուղղությամբ:

Ներկայացնելով իր տոմսը, մարդն տնցավ գնացքի մոտ: Գնացքը պատրաստվում էր շարժվելու: Հընչեց յերկրորդ զանգը: Դանդաղորեն սողացին կանաչ վագոնները: Մարդը նստել էր կուպեյում և ծխում էր: Նա հանեց գիրքը, սկսեց անփուլթ կերպով թերթել, հետո ցած դրեց և մտածմունքի մեջ ընկած, նայում էր պատուհանից դուրս:

— Թույլ ավեք վառել, — դեպի նա ձգվեց ծխախոտը ձեռքին հարեանը:

— Խնդրեմ:

Նույն կուպեյի հարեանի ձեռքը, վորով ծխախոտը բռնված էր, արագ և աննշմարելի մի շարժում գործեց

և հաճոյակատար մարդու շիկավուն միբուքը դեմքից  
խկույն անջատվեց: Մարդը վախեցած մի կողմ գնաց,  
ձեռքը շտապ տարավ գրպանը:

— Հանգիստ, առանց շփոթվելու, խուլուհամը,—  
կանգնեցրեց նրան հանգիստ, նախադուշացնող մի  
ձայն վերևից:

Նազանի սև բիբը ուղղված էր նրա գլխին: Պարզ-  
վեց վոր «խուլուհամը» ոտաբերկրյա պետության  
փորձված, հին լրտես է: Նա փորձում էր մտնել ուղղա-  
կան գործարան դիվերսիոն նպատակով:

## ԶՈՐԿԱՆ

Յերբ մարդու միայն տաս տարին է լրացած,  
գժվար է ասել, թե նա յերիտասարդ է: Յեվ ահա  
Զորկային այդպիսի բնորոշումը միանգամայն սաղա-  
կան էր:

Նա գունատ, լղաբիկ մի աղջիկ էր՝ յերկու փոք-  
րիկ հյուսերով, կարճլիկ թթուվ, մեծ յերկնագուռն աչ-  
քերով, վոր տաս տարեկանից էլ յերիտասարդ էր  
յերևում:

Յերեխաները սիրում էին նրան: Նա լավ էր սո-  
վորուք, ակտիվ ախոներ էր, ունէր ընկերուհի, վորին  
պատմում էր իր փոքրիկ դադանիքները:

Բայց Զորկան ունէր մի դադանիք, վորը վոչ  
վոքի չէր վստահում: Զորկան սաստիկ վախենում էր  
մետրոյից, ավելի շատ շարժվող սանդուխտներից—  
եսկալատորից:

Այս վախը, վորը վոչ մի բանով չէր բացատրվում  
և անհասկանալի յեր, թե ինչից է, Զորկան վոչ մի  
կերպ չէր կարողանում հաղթահարել:

Ամեն ժամանակ էսկալատորին մոտենալիս նա  
դողում էր: Նա յերբեք այնտեղ մենակ չէր գնում,  
գնալիս էլ ջղաձգությամբ պինդ կաշում էր այդ ժա-  
մանակ իր մոտ գտնվող մարդուն:

Նա լայն բաց էր անում իր, առանց այն էլ հըս-  
կայական յերկնագուռն աչքերը և հանդարտ ու դան-

դագ վայրելքի և վերելքի ժամանակ համարյա չեք շնչում:

Զորկան ընտանիքում մենակ եր միծանում: Նա շատ քիչ եր տեսնում իր մորը, վորը մի բարիկին եր, դրամատիկական թատրոնի միջակից բարձր դերասանուհի: Նա քիչ եր տեսնում նաև խորթ հորը, վորը խոշոր տնտեսական աշխատող եր:

Մայրը սիրում եր Զորկային: Բայց նա, անհավասարակշիռ և ջղային լինելով, աղջկան միատեսակ չեք վերաբերվում: Հաճախ միծ սիրով զրկում եր նրան և հանկարծ միանգամից վանում իրենից բացականչելով:

— Դե այդպես պրոզայիկ հում, հում ես նման... Վոչ: Դու դերասանուհի չես դառնա... Բերանը... Իրիթը... Դու մայրիկից վոչինչ չունես, դու Ալեքսեյի պատճենն ես:

Զորկան արդեն ընտելացել եր մոր այս մենախոսություններին: Նա համբերությամբ լսում եր այս բոլորը և յերբ մայրը հարց եր տալիս. «Դե, հում ես նման դու այդպես», նա ինքն շտապ պատասխանում եր. «յես պրոզայիկ եմ, յես իմ հայրիկ Ալեքսեյի պատճենն եմ»:

Հայրիկ Ալեքսեյը... Այդ վաղուց եր: Վեց տարի առաջ Զորկայի հայրն ուղարկվեց կուսակցական կազմակերպության կողմից հացամթերուհիների և սպանվեց կուլակային գնդակով:

Զորկան այն ժամանակ դեռ չորս տարեկան եր: Բայց նա պայծառ, անմոռանալի հիշողությամբ հիշում եր իր այնքան հասարակ, ուրախ հորը:

Մոտենում էյին ամառային արձակուրդները:

Կանաչով էյին ծածկվում Մոսկվայի պարկերն ու այգիները:

Այսօր պարապմունքները վերջացան սովորականից շուտ, վերջին յերկու դասերը չկայացան:

— Զորկա, տո՛ւն գնանք, — կանչեցին նրան յերեխաները, և դպրոցականների խմբին հաճույքով ընդունեց արևային ազնկոտ փողոցը:

Յերբ նա իրենց բնակարանի դանդը տվեց, դուռը բացեց Ֆեդյա հորեղբայրը, Զորկայի խորթ հայրը:

— Հորեղբայր Ֆեդյա, դուք արդեն տանն եք:

— Զորկա, ինչո՞ւ այդպես շուտ:

Համարյա յերկուսն էլ միաժամանակ զարմացան: Խորթ հոր ձայնի մեջ նկատվում եր մի փոքր թագնելած զայրույթ:

— Ահա թե ինչ, աղջիկս, ծառայությունից յես շուտ եմ յեկել: Ինձ մոտ պետք է գամի ծանոթ: Մենք պետք է աշխատենք, իսկ դու գնա գրոսնիր: Յեղանակը յավ է, տաք, իսկ այստեղ դու մեզ միայն կխանդարես: Գնա, Զորիկս, գրոսնիր:

Նա փաղաքշանքով ձանապարհ դրեց նրան, նրան ուսախառն գրկելով:

Զորկան ուրախ եր մենակ վազվզելու: Նա ուզեց միայն գրքերը տուն գնել: Ուրախ վոստյուններով նա վազեց իր սենյակը: Յեվ հենց այդ բոպկյին դանդը հնչեց:

Այդ բոպկյին Ֆեդյա հորեղբայրը Զորկայի համար անհասկանալի մի բան արեց, վորը շարժեց նրա հետաքրքրությունը: Նախքան զանգահարողի համար դուռը բացելը նա մոտեցավ և պինդ ծածկեց նրա սենյակի դուռը:

Միջանցքից լավեցին ծանր քայլեր:

— Դուք մենակ եք, — հարցրեց անծանոթ մարդը: Ֆեդյա հորեղբայրը ինչ վոր բացատրեց ցածր, շտապ ձայնով: Բայց Չորկան բռռերը չհասկացավ:

Հյուրի հետ միասին Ֆեդյա հորեղբայրը գնաց իր սենյակը: Չորկայի զբոսնելու ցանկությունն անցավ: Իրա փոխարեն աճում էր հետաքրքրությունը:

«Ո՞վ էր յեկզքը: Ինչո՞ւ Ֆեդյա հորեղբայրը ուղարկում է նրան զբոսնելու և ինչը ցերեկով յեկել է աշխատանքից: Չի՞ վոր քանի անգամ նրա մոտ են յեկել յերեկոները, նրա հետ միասին գրել են, գծագրել և միշտ մայրիկը և նա մնացել են տանը: Իսկ այսոր, չգիտես ինչու, սենյակի դռուն էլ փակեց, չէր ուզում վոր նա տեսներ յեկողին»:

— Հորեղբայր Ֆեդյա, գնում եմ, — բարձր ձայնով գոչեց Չորկան, վազեց միջանցքով, չիկացրեց կողպեքը, պինդ խփեց սուտքի դուռը և... մնաց:

Յղջիկը կամացուկ, գազտագողի, բավականությունից փայլատակող աչքերով, վոր նա այդպես խորամանկ բան մտածեց, հետ վերադարձավ: Մոտեցավ դռանը և քարացած կանգնեց: Ֆեդյա հորեղբայրը բարձր և հուզված ձայնով ասում էր.

— Սա անմտությունն է: Չեր հեռախոսային դանդը ինձ համար միանգամայն անսպասելի յեր: Դուք այժմ իմ բնակարանում եք: Սա պարզապես խելագարությունն է...

— Ե՛, սիրելիս, դուք վախկոտ եք, դուք սատանայի նման վախկոտ եք, — հեզանքով կտրեց Ֆեդյա հորեղբոր խոսքը անծանոթ մարդը:

Չորկան ուշադրություն դարձրեց այն բանի վրա, վոր այդ մարդը ուռեան հետքերը անկանոն, քիչ կտորրտված ձևով է արտասանում:

— Յե՛վ ինչ սարսափելի բան նրանում, վոր յես՝ ոտարեկրյա ֆիրմայի ներկայացուցիչս, այցելեցի մի տրեստի հարգելի կառավարչի, վորը սարքավորում է գնում մեզանից իրենց գործարանների համար: Դե, գործի անցնե՛ք: Մենք վրդովված ենք ձեր դանդաղաշարժությունից: Չեր կազմակերպության արոցկիստական աշխատանքի համար առատորեն միջոցներ են բաց թողնվում: Մենք ձեզ հնարավորություն ենք տվել կապեր հաստատել արտասահմանի հետ, վոր շատ ոգտակար արդյունք ունեցավ... Յե՛վ այսպես, բանն ինչո՞ւն է: Ինչո՞վ բացատրել ձեր այս դանդաղաշարժությունը: Լինտերային ցեխերի մասին մենք մինչև հիմա դեռ տեղեկություններ չենք ստացել: Չեր տված խոստում տեղեկություններ չենք ստացել: Գործարանում ավարիա կազմակերպվել է քապերի մենալ գործարանում ավարիա կազմակերպվելու մասին, մինչև այժմ մտում է, վորպես խոստում: Վորպես պատասխան լսվեց խորթ հոր ձայնը. ցածր, կարծես խնդրում էր.

— Անհեթեթությունն է, անհեթեթություն, — կտրեց նրան անծանոթը. — դուք տրեստի տերն եք: Հեռացրեք այդ չափից դուրս անհանգիստ մարդկանց:

Չորկան այլևս չկարողացավ կանգնել և լսել: Նա վախ զգաց: Ուզում էր բարձր ձայնով լաց լինել: Արցունքները զսպելով, կամացուկ, վոտի մատները ծայրերի վրա, դուրս յեկավ բնակարանից: Չորկան չարժեքի հետեից դուռը փակեց:

Գունատ, շփոթված աղջիկն զգում էր, վոր նա գարձել է մի մեծ, սոսկալի գողտնիքի վկա: Բայց ի՞նչ անել:

«Հորեղբայր Ֆեդյա... ինչու այդպես... Նա նրան այնքան փաղաքում էր, շատ խոսքալիքներ էր նվիրում, մեքենայով ման էր ածում...»

Յեվ հանկարծ Զորկան հիշեց հորը, Ալեքսեյ հայրիկին: Մայրիկը պատմում էր, վոր հայրիկին սպանել են թշնամիները նրա համար, վոր նա պայքարում էր խորհրդային իշխանության համար:

«Ուրեմն հորեղբայր Ֆեդյայի և այն անծանոթի նամաներն են սպանել...»

Աղջիկը նստեց սանդուխքների վրա և լաց յեղավ: Նրա արցունքների մեջ վերավորանք կար և անոգնակառություն: Նա չգիտեր, ինչ անել: Պետք էր մի բան վորոշել, բայց ի՞նչ:

Վերևում չխկաց կողպեքը:

«Այդ մեզ մոտ է», անցավ նրա մաքուր:

Կողիկների զգուշ ճոճոց: Կողքից անցավ մի մարդ: Բուռը պինդ ծածկվեց:

...Յեվ Զորկան վորոշեց: Նա վերկացավ և հետեվեց գնացողին:

Արևը խփեց նրա աչքին, կարծես խաղ էր անում: Զորկան գնում էր բուռնցքով սրբելով արցունքները, աշխատելով աչքից բաց չթողնել առջևից գնացող մարդուն:

Ահա փողոցի մեջտեղում ձեռքը վերեվ բարձրացրած քաբացած կանգնած է միլիցիոները, բաց է թողնում մեքենաները և մարդկանց: Կվազեր նրա մոտ, բայց նա, վորին հետեվում էր, գնում էր առաջ: Զորկան վախենում էր հետ մնալ:

Նրա դիմաց փայլում էր հսկայական «Մ» — մետրոն: Անծանոթն արագ մտավ նախասրահը: Նոր փորձություն Զորկայի համար:

Բռնելով բազրիքից, վախից թուլացած, նա սահեց ցած: Ստորերկրյա գնացքի դռներից Զորկան և

նրա ուղեկիցը մի կերպ ներս մտան և փակվեցին այնտեղ «Պատրաստ» կախարդական կանչից հետո:

Տասը բոպե հետո, Զորկան ուշադրությամբ նայեց այն տան և բնակարանի համարը, ուր մտավ անծանոթը, կանգնած միլիցիոների դիմաց, ինչ վոր տաք-տաք բան էր ասում նրան:

Բայց արդեն վորոշ ժամանակ հետո նրան ուշադրությամբ լսում էր մի մեծ առանձնասենյակում պաշտպանական գույնի կարմիր գետլիցաներով վերնաշապիկը հագին մի մարդ, և նշումներ կատարում նշատետրում:

Հորեղբայր Ֆեդյային հենց նույն գիշերը բանտարկեցին: Պարզվեց, վոր նա ոտարերկրյա հետախուզության հետ կապված արոցկիստ է, իր հայրենիքի, իր ժողովրդի թշնամին:

Իսկ Զորկան, առաջվա նման նստած առաջին նստարանին, սովորում է:

### ՔԵՌԻ ԿԱՐԼՈՒՇՈՒՆ

Ամեն ոք, յերբ դպրոցական պարապմունքները վերջանալու դանդը խփում եր, յերեխաները վազում եյին դեպի դրոսարան:

Այնտեղ, յերկար նստարանի վրա սպասում եր նրանց նոր բարեկամը՝ ուրախ, ժպտերես քեռի Կարլուշան:

Այս փոքրիկ, շարժուն ծերուկը, այնքան հառա-րակ և ուրախ, դեռ հեռվից ժպտում եր յերեխաներին:

— Բարե, պիտներներ:

— Բարե ձեզ, քեռի Կարլուշա: Ի՞նչպես են գործերդ:

— Վոչինչ, մի՞թեծեր մարդուն շատ ե հարկավոր: Նստած, ող եմ շնչում: Նստենք, կտրիճներ: Յես ձեզ հիմա ֆոկուս ցույց կտամ:

Նա բարձրացնում ե լղարիկ ձեռքը և յերկար մատերը շարժում:

— Չեռքս դատարկ ե, այո: Այժմ նայեցեք: Մեկ, յերկու, — նա սեղմում ե բռունցքը, փչում ե նրա վրա և խորամանկորեն ժպտալով բաց անում. — խնդրեմ:

Բռի մեջ յերկու փոքրիկ դրամ: Յերեխաները հիանում են: Ահա այսպես միշտ, ամեն ոք, քեռի Կարլուշան հյուրասիրում եր նրանց նոր ֆոկուսներով, սրամիտ հնարովի բաներով:

Վոչ վոք չգիտեր, վորտեղից եր յերևացել այս բարի, փոքր ինչ ծիծաղաշարժ ծերունին: Այստեղ, դպրոցի կողքի դրոսավայրում տեղի յեր ունեցել նրանց առաջին ծանոթությունը:

Քեռի Կարլուշան ասում ե.

— Ո՞ւմ կինոյի փողն ե պակասում: Վերցրե՞ք Յես ինձ համար նորից կպատրաստեմ:

Նա մեկնում ե դրամը պիտներ Կոստյային, ուղ-մական հայտնի ինժեների տղային: Նրա հետ ծերուկն առանձնապես քնքույշ ե:

Բայց քեռի Կարլը յերեխաներին վոչ միայն ֆոկուսներ ե ցույց տալիս, այլ հաճախ նա նրանց հետ կատակով խոսք ե բացում նրանց ծնողները մասին: — Ով ինչպիսի՞ հայր ունի, ինչպիսի՞ մայր ունի, ով ինչպի՞ ե դրավում, ում ծնողներն են ավելի լավ...

Նա արտասանում ե ուրախ վտտանավորներ. «Ամեն տեսակ մայրեր պետք են, ամեն տեսակ մայրեր կարե-վոր են»... և ծիծաղում ե նրանց վրա, յերբ յերեխա-ները տաք վեճի յեն բռնվում իրար հետ իրենց մայրե-րի և հայրերի առավելությունների մասին, վորտեղ են նրանք աշխատում և ում աշխատանքն ե կարևոր:

Մի անգամ քեռի Կարլուշան հարցրեց յերեխա-ներին.

— Ինչպես ե դպրոցում, ոտար լիզվից շատ են հուփ տալիս:

— Հուփ են տալիս, քեռի Կարլուշա, շատ են հուփ տալիս, — հառաչեց Կոստյան: — Ահա, տան համար տվե՞ր են, իսկ յես այդ ձևերը չեմ հիշում:

Քեռի Կարլուշան ցնցվեց:

Ինչ արած, դու լավ տղա յես, կարկավոր ե քեզ սգնել: Միայն, ահա թե ինչ. չգիտեմ, վորտեղ պարա-պել: Դպրոցում չի կարելի, ինձ մտտ ել անհարմար ե, ձեզ մտտ տանը, — յերևի, շատ մտրդ կա, կխտնգարեն...

Տղան ուրախացավ:

— Ինչ եք ասում, քեռի Կարլուշա, տանը վո՛չ վոք  
չկա: Մեզ մտո՛ շատ ուշ են գալիս: Գնանք, խնդրեմ:

— Դե, լավ, գնանք, միայն Կոստյա տես, կլռես,  
յեթե վոչ ասելուդ համար դու կտուժես թե քո ծնող-  
ների կողմից և թե դպրոցում:

Կոստյան ծերուկին տարավ իր մոտ: Տեղավորվեցին  
հոր առանձնասենյակում, մեծ գրասեղանի մոտ:

Հանկարծ քեռի Կարլուշան գլխի ընկավ, թե ինչ  
ասի:

— Այ քեզ դժբախտություն, — ծխախոտը մոռացա:  
Իսկ յեթե մի հատ խորը չքաշեմ, գլուխս չի աշխատի:  
Բայց և այնպես ծերուկյուն ե: Սիրելի Կոստյա, դու  
ավելի վոքը ես, վաղիր այստեղ աճկյունը, գնիր ինձ  
համար ծխախոտ, իսկ յես դեռ կնայեմ, տեսնեմ ինչ  
ես գրել: Տուր տետրակը:

Տղան շուտով վերադարձավ: Ծերուկը նստած եր  
նույն տեղում: Նա արդեն մաքուր և կանոնավոր ար-  
տագրել եր դպրոցական առաջադրանքը: Յերևում եր,  
վոր քեռի Կարլուշան լավ գիտեր ոտար լեզուն:

Տղան շատ ուրախ եր: Դպրոցական աշխատանքը  
պատրաստ եր: Քեռի Կարլը խոստացավ հետագայում  
ես ոգնել նրան:

Բայց յերեկոյան ամպրոպը ճայթեց:

Յերբ հայրը, աշխատանքից վերադառնալուց և մի  
քիչ հանգստանալուց հետո անցավ իր առանձնասե-  
նյակն աշխատելու, հանկարծակի դուրս յեկավ սենյա-  
կից հուզված, չար և կտրուկ դիմեց կնոջն ու սղային:

— Ո՞վ ե քրքրել իմ սեղանը: Զ՞ե վոր յես խընդ-  
րել եմ ձեռք չտալ իմ թղթերին:

— Վո՛չ վոք, — գունատվելով տասց Կոստյան: Վոչ  
վոք չի յեղել: Ծիշտ ե, այստեղ ե յեկել մի ծերունի՝  
քեռի Կարլուշը, բայց հենց այնպես... հենց մի քիչ  
ոտար լեզվից ինձ ոգնելու...

Հայրը աչքերը հառած նայեց Կոստյային, նստեց-  
րեց նրան և սկսեց հարց ու փորձ անել:

Յերկու որ հետո Կոստյան նորից հրավիրեց իրենց  
տուն քեռի Կարլուշին ոտար լեզվից իրեն ոգնելու:

Այստեղ ել նրան ձերբակալեցին, բռնելով հան-  
ցանքի վայրում:

Հետաքննության ժամանակ ապացուցվեց, վոր  
«բարի», «սիրալիր» քեռի Կարլը մի ոտարերկրյա հետա-  
խուզության փորձված և հին լրտես ե:

## ՓԱԹԵՔՈՎ ԱՆԾԱՆՈՒԹԸ

Նորերս լրացավ Լյովայի տաս տարին: Նա սովորում է յերկրորդ դասարանում և պատրաստվում է դառնալ պիոներ:

Լյովան ապրում է մոր և տատի հետ: Հայրը մեռել է յերկու տարի առաջ: Մայրն աշխատում է գործարանում, տունն է դալիս ուշ յերեկոյան, վորովհետև քացի աշխատանքից, սովորում է նաև դասընթացներում:

Այն բնակարանը, վորտեղ ապրում է Լյովան, փոքր է, բաղկացած է ընդամենը յերկու սենյակից: Մեկ սենյակում ապրում են նրանք յերեքով, իսկ մյուսը զբաղեցնում է Վասիլի Իվանովիչը, այն գործարանի պահեստապետը, վորտեղ աշխատում է Լյովայի մայրը:

Վասիլի Իվանովիչը մտերիմ էր Լյովայի հետ: Հաճախ յերեկոները նա պատմում էր իր անցյալի մասին, գերմանացիների հետ պատերազմի մասին: Տուլյց եր տալիս խաչը և ասում, վոր նվեր է ստացել քաջության համար:

Հաճախ Վասիլի Իվանովիչը կանֆետիվ թիյով էր հյուրասիրում Լյովային և նույնիսկ կինո յեր տանում:

Այսոր առավոտից բնակարանում լուսթյուն է:

Մայրը և Վասիլի Իվանովիչը աշխատանքի յեն, իսկ տատիկը գնացել է խանութները: Փողոցում աշնանային բարակ անձրև էր մաղում:

Լյովան տխուր էր: Նա դուրս յեկավ միջանցք: Մութ է: Դատարկ: Ահա այստեղ, հենց Վասիլի Իվանովիչի սենյակի դիմաց նա յերբեմն կազմակերպում էր իր խաղերը: Նա դառնում էր վորսորդ և հետևում այն վագրին, վորը պետք է յերեվար միջանցքի հակառակ ծայրին: Յերբեմն նա իրեն սահմանապահ էր պատկերացնում և թագնվում էր անկյան կեղտոտ կողովների և կապոցների հետևը—նա գնում էր սահմանը խախտողների հետքերով:

Ահա այժմ էլ Լյովան պառկել է և թագնվել, ամուր սեղմելով իր ձեռքի մեջ մոր նվիրած հրացանը:

Բայց նրա խաղը խանգարեցին: Մուտքի դռան կողպեքը չըխկաց և յերկարավիզ կռիկները ճռճուցնելով ներս մտավ Վասիլի Իվանովիչը: Առանց իբ սենյակը մտնելու, նա թակեց Լյովայի սենյակի դուռը: Պատասխան չկար: Այն ժամանակ Վասիլի Իվանովիչը կիսով չափ բացեց դրսի դուռը և ինչ վոր մեկին կանչեց:

Դանդաղորեն միջանցք մտավ թիկնոցը վրան մի մարդ, հետը մի փաթեթ:

Լյովան թագնվեց անկյունում: Նրա հետաքրքրությունն ավելի շարժվեց: Նրան նույնիսկ թվաց, վոր ինքը հանցագործ է վորսում:

Խաղն ավելի հետաքրքրել էր դառնում:

Մարդն անցավ Վասիլի Իվանովիչի սենյակը:

Գուռը կիսով չափ բաց մնաց և տղան լսում էր և տեսնում այնտեղ կատարվածը:

— Ի՞նչպես ձեզ հաջողվեց աննկատելի անցնել,— հարցրեց Վասիլի Իվանովիչը:

— Դա յերկար պատմութիւն է,— արձագանքեց նրան անծանոթը, — այժմ յես Սերգեյեվ եմ: Կանգ եմ առել յես «Դոն» հյուրանոցում: Հասկանալի՞ յես: Այս քրը,— նա ցույց տվեց փաթեթը— վաղը կտանես գործարան, սինթեզի ցեխը:

«Այնտեղ, վորտեղ մայրս ե», անցավ Լյովայի մտքով: Սկսեց ավելի ուշադիր լսել:

Անծանոթը շարունակեց.

— Հիշում եք դուք իմ հրահանգը, ինչպես վարվել: Թագրեք մի վորեւ առանձին տեղ, ցրեք և հայդա գործարանից: Հեռու: Թե չես, վոսկորներն ել չեք հավաքի: Հնա, ահա ձեզ կազմակերպութիւնից . . . — Նա ձեռքը տարավ գրպանը և Վասիլի Իվանովիչին տվեց մի կապոց փող: — Խնդրի հաջող կատարման դեպքում ելի կլինի: Իսկ ինձ ուշանալ չի կարելի: Այսօր յերեկոյան մեկնում եմ:

Մարդը վեր կացավ, դուրս յեկավ սենյակից, կամաց ծածկեց իր հետեից բնակարանի դուռը:

Վասիլի Իվանովիչը խնամքով վերցրեց փաթեթը, բարձրացրեց պարկետի սալերից մեկը և փաթեթը կոխեց հատակի տակ: Հետո, նա կողպեց սենյակը և գնաց:

Լյովան դեռ միջանի ըոպե անշարժ պառկած էր. նրա սիրտը կատաղորեն խփում էր: Նա դուրս յեկավ թագստոցից և չծածկելով կեպին, առանց վերարկուի և կրկնակողիկների թուով փողոց: Նրա վրտների տակ

ճղփում էր փոսերի ջուրը, բայց նա վոչինչ չեր նկատում:

«Շնու: Շնու»:

Ահա հերթապահ վիլիցիոները: Վազեց դեպի նա:

— Յես ուզում եմ ժողկոմին տեսնել: Շնու:— Միլիցիոները զարմացած նայեց նրա հուզված զեւքին:

— Իսկ ի՞նչ է պատահել:

Լյովան դժվարանում էր խոսել:

— Այստեղ գործարանը... գործարանն են ուզում պայթեցնել... — նա պատրաստ էր հուզմունքից լաց լինել:

Միլիցիոները հասկացավ, վոր գործը լուրջ է: Վազելով հասավ հեռախոսային սնակին և կանչեց հարկաւոր համարը:

Միջանի ըոպե հետո կարիք պետլիցայով վերնաշապիկներ հագած յերկու մարդ ուշադրութ յամբ լսում եյին Լյովայի պատմածը:

Նա մանրամասն պատմում էր ըոլորը:

Անվանեց հյուրանոցը և ասաց այն մարդու ազգանունը, վորը յեկել էր Վասիլի Իվանովիչի մոտ:

Հենց նույն ուրը թշնամիները բանտարկվեցին: Լյովան կանխեց գործարանի պայթեցումը և ավերումը: Նա փրկեց հարյուրավոր մարդկանց կյանքը:

ԱՆԸՆԴՈՒՆԱԿ ԱՇԱԿԵՐՏՈՒՂԻՆ

Սերյոժայի հայրը թերթում հայտարարութիւններ ար արեւելի:

«Մի փոքրիկ ընտանիքի համար հարկավոր ետնային աշխատող»:

Ընտանիքն իրաք մեծ չեր, հայրը՝ խոշոր ռազմական աշխատող, մայրը՝ բժշկուհի և Սերյոժան՝ տասնընչորս տարեկան պիտոներ: Ահա ամբողջ ընտանիքը:

Շուտով աշխատողը յեկավ: Նա ունեւր բաւական լավ հանձնարարական և կանոնավոր փաստաթղթեր:

Տնային աշխատողի անունը Նյուրա յեր: Նա գիտեր լվանալ, հարթուկել, ճաշ պատրաստել... Արտաքուստ շատ ամոթխած եր ու համեստ: Սերյոժայի մայրը նրան հավանեց:

Այն հարցին, թե նա արդոք զրպետ ե, — Նյուրան բացասական պատասխան արեց և նույնիսկ հառաչեց. — հնարավոր չի յեղել սովորել:

Մայրը զարմացավ:

— Տարորինակ ե... Այժմ շատ քիչ են անգրագետները, ինչ ես մտածել, վոր մինչև հիմա չեո սովորել: Սերյոժա, — դիմեց նա վորդուն, — դու պետք ե այս բացը շտապ կարգով վերացնես: Նա մեղ մոտ հին հասարակական աշխատող ե, — հանաքով արելացրեց մայրը, — Գերագույն Խորհրդի ընտրութիւնների ժամանակ մեր տանն ապրող յերկու ծերուկներին կարճ

ժամանակում գրել սովորեցրեց, իսկ դու յերիտասարդ ես, հիշողութիւնդ լավ ե, գործն արելի արագ կընթանա:

Աշխատավորուհին սիրով համաձայնեց:

Սերյոժան ես չբողոքեց այս լրացուցիչ բեւեւածութիւն դեմ:

Շուտով սկսեցին պարագմունքները: Գարգվեց, վոր Նյուրան շատ անընդունակ աշակերտուհի յե: Շատ դժվարութեամբ եր սովորում: Նա համարյա վայրկեանակեո մոռանում եր այն բոլորը, ինչ բացատրում եր նրան յերիտասարդ ուսուցիչը:

Ծնողներն սկսեցին հետգհետե ծիծաղել իրենց վորդու վրա:

— Դե, պրոֆեսոր, ինչպեո են գործերդ. — յերբեմն հեզնաբար ասում եր հայրը, դիմելով վորդուն. — դժվար ե շարժվում, — ասում ես, — ուսուցումը: Դա քեզ համար վաղեյրով խաղալ չե: Դե, յեթե ուսուցիչ անուն ես կրում, գործը հասցրու մինչև հաղթական վախճան:

Սակայն Սերյոժան չեր մտածում հրաժարվել դասերից: Դպրոցեց հետո, արելի հաճախակի, նա յերկար նստում եր իր քեի առաջադիմող աշակերտուհու հետ և համբերատարութեամբ բացատրում եր նրան զանազան քերականական գերիմաստութիւններ:

Մի որ ցերեկով Սերյոժան շուտ վերադարձավ տուն, գիրքը ձեռքին տեղավորվեց ճաշասենյակում բազկաթոռի վրա: Դիրքը նա վերցրել եր իր մտերիմ ընկերոջից յերկու որով և շտապում եր կարգալ, վորպեսզի ժամանակին վերադարձնի:

Հարեան սենյակի դուռը կիսաբաց եր: Նյուրան

փալաօր ձեռքին պտույտ եր գալիս հայրիկի սեղանի շուրջը:

Գրքուս կարդացած ինչ վոր դարձվածքի վրա մտածելով՝ Սերյոժան մեքենայորեն բարձրացրեց գլուխը և շիտթված հայացքով հետևում եր աշխատավորուհուն:

Ի՞նչ ե այս: Նյուերան կուացել ե սեղանի վրա գրված բաց գրքի վրա: Յերևում ե, ինչ վոր մի բան նրան հետաքրքրել ե: Ահա նա շատ սովորական շարժումով շրջում ե յերեսը: Նա կարգում ե:

Հանկարծակի ցնցվելով, կարծես հասկանալով, Նյուերան հետ թռավ սեղանից:

Սերյոժան վայրկենապես աչքերն իջեցրեց: Գլըքին նայելով, նա զգում եր, վոր աշխատավորուհին հուզված և կասկածանքով իրեն ե նայում: Յեվ նա այնպիսի դեմք ընդունեց, վոր թե վոչինչ չի նկատել: Նյուերայի վարմունքը նրան տարրորինակ և անհասկանալի յեր:

Վորոշեց պատմել ծնողներին: Հետո միտքը փոխեց, վախեցավ, վոր նրա «գյուտի» վրա կծիծաղեն, կամ թե կմտածեն, վոր նա այս բոլորը հնարել ե, վորպեսզի մի կերպ ազատվի դասերից:

Միքանի որ հետո հայրը մոր հետ պատրաստվում եյին թատրոն գնալ:

— Յես նույնպես գնում եմ, — ասաց Սերգեյը, — կգնամ ընկերոջս մոտ:

— Իսկ յես մի փոքր կպառկեմ: Մի տեսակ վատառոջ եմ, կողքս ծակում ե, գլուխս ցավում, մրսել եմ, յերեկ, — ասաց Նյուերան, նրանց ճանապարհ գցելիս:

Սերգեյը դուրս յեկավ ծնողների հետ: Նրանց

ուզեցիցելուց հետո նա հորից ինչրեց բնակարանի բանալին, բացատրելով, վոր ինքը մտադիր ե ընկերոջ մոտից շուտ վերադառնալ և չի ուղում անհանգըստացնել հիվանդ աշխատավորուհուն:

Ստանալով բանալին, նա անմիջապես վերադարձավ տուն: Կամացուկ բացեց մուտքի դուռը և մտավ տուն: Սենյակի պինդ չփակած դռան արանքից լույս եր թափանցում: Սերյոժան կուացավ դեպի անցքը և քիչ եր մնում հուզվունքից գոռար. «Անզրագետ»...

Նյուերան նստել եր հոր սեղանի մոտ, և նայելով թղթին, ինչ վոր շտապ բան եր արտագրում բլոկնոտում: Իրեն չմատենելու համար, զգուշությամբ, Սերյոժան դուրս յեկավ սանդուխքների վրայի հարթ տեղը և կարծես վոչինչ չեր պատահել, զանգահարեց:

Նյուերան իսկույն չբացեց:

— Քնել եյի, — աչքերը տրորելով և հորանջելով բացատրեց նա, — չլսեցի:

Սերյոժան ներս մտավ սենյակ:

Այնտեղ ամեն ինչ սարքին ու կարգին եր, ինչպես միշտ:

Յերբ հայրը վերադարձավ թատրոնից, Սերգեյը պատմեց նրան «տնային աշխատավորուհու» մասին:

Միքանի որ հետո «աշխատավորուհին» ձերբակալվեց:

Մի ոտաբերկրյա պետության լրտես լինելով, նա անզրագետ տնային աշխատավորուհու անվան սակտողուհի եր խոշոր ռազմական մասնագետի տունը վարպեսզի ձեռք բերի կարևոր գաղտնի նյութեր:

Պիոների զգուշությունն ոգնեց մերկացնելու թշնամուն:

«ՍԵՎ ՔՌՉՈՒՆՆԵՐ»

Մեծ գասամբխոցին յոթերորդ դասարանի աշակերտ  
Հենրիխ Կնեկերը իրենց դասարանի միջոցներով  
ների կանչեց մի կողմ:

— Տղաներ, լավ կլինե՞ր դայիք ինձ մոտ,—ասաց  
նա կրտսեանը.—կխոսե՞յինք զեսից, զհնից, պատեֆոն  
կլսե՞յինք: Հրաշալի պլաստիկաներ ունենք, արտա-  
սահմանյան են:

— Իսկ հվքեր կան ձեզ մոտ տանը:

— Վոչ վոք, միայն յեղբայրս ե, բայց նա լավ  
տղա յե, չի խանդարի:

— Կով:

Հանգստի նախորդակին աղաները հավաքվեցին  
Հենրիխի բնակարանը:

Սմինը դուրս յեկավ այնպես, ինչպես նա ասում  
էր—շատ լավ պատեֆոն, արտասահմանյան պլաստիկ-  
աներով:

Հենրիխի յեղբայրը, վոր յերիտասարդ մի տղա  
յեր, հյուրերին ընդունեց հասարակ և սիրալիր կերպով:

— Ապա, ապա, տղաներ, համեցեք, շնորհ բերեք,  
ուրեմն պետք ե ուրախանանք:

Յեվ իրոք, շատ ուրախ եյին:

Նրանք յերկար մնացին: Յերբ բաժանվեցին, ար-  
դեն ուշ եր:

— Փուք շուտ-շուտ յեկեք,—հրավիրում եյին Հեն-  
րիխն ու իր յեղբայրը բաժանվելիս:

Տղաները դարձան այս բնակարանի մշտական  
հաճախորդները: Նրանց ամեն ժամանակ սիրալիր  
ընդունում եյին, ամեն տեսակ բաներով հյուրասի-  
րում: Հենրիխի յեղբայրը միշտ տանն եր լինում: Նա  
ուրախության կազմակերպիչն եր, հնարագիտություն-  
ների մեջ անսպառ:

— Մենք Հենրիխի հետ խիստ մտերիմ ենք, մեզ մոտ  
ամեն ինչ կատարվում ե առանց ձեռնադրությունների,  
ընկերաբար: Իսկ Վոք, տղաներ, ինչպես եք ձեր  
յեղբայրների, ծնողների հետ:

Դպրոցականները մանրամասն պատմում եյին  
իրենց յեղբայրների, ծնողների մասին, ով ինչ ե  
անում, ով ինչով ե զբաղված...

Պիոներ Պիմա Ռակիտինը (գանգատվում եր.

— Իսկ յես իմ հորը բոլորովին չեմ տեսնում: Նա  
աշխատում ե ուղիական քիմիայի գծով, միշտ զբաղ-  
ված ե, նույնիսկ հանգստյան օրերին:

— Այդպես, այդպես, հասկանում եմ, կարեկցում  
եմ: Յես, յեղբայր, նույնպես քիմիկոս եմ: Հա, ի դեպ,  
իսկ հայրդ տանը չի աշխատում:

Դիման գլխով արեց, հաստատելով նրա ասա-  
լիքը.— Ինչպես չե, նույնիսկ շատ հաճախ, գերիշները  
նստում ե, անընդհատ ինչ վոր գծում, գրում, կարդում ե:

Նա այժմ ինչ վոր մի գյուղտի վրա յե աշխատում:  
Շրջապատողների ծիծաղն ու աղմուկն ընդհատեց  
նրանց խոսակցությունը:

Այդ յերեկո Հենրիխի յեղբայրն առանձնապես  
ուրախ եր, նա ծիծաղում եր, պարում, ուրախ պատ-  
մություններ եր պատմում:

Յերբ վազելուց ու պարելուց բոլորը թուլացել

Ային և նստել սեղանների մոտ, նա վեր կացավ և հայտարարեց, վոր ուզում ե մի գործնական առաջարկութուն մտցնի:

— Տղաներ,— սկսեց Կնեւլերը:— Մենք բոլորս բարեկամներ ենք, ճիշտ չե՞:

Հավանութուն տվող բացահայտութուններն ու ծափահարութունները հաստատեցին, վոր նա չէ սխալվել:

— Բայց մեր բարեկամության մեջ ինչ վոր մի բան պակասում ե: Յեւ գիտե՞ք ինչ... Արկածներ, խորհրդավորութուն: Ահա այդ պատճառով յես առաջարկում եմ ստեղծել մի խմբակ, գաղտնի խմբակ: Թեկուզ անվանենք այն... «Սե թռչունների ընկերութուն»:

Այս միտքը տղաներին շատ դուր յեկավ: «Սե թռչուններ»,— իրոք խորհրդավոր ե և լավ:

Կնեւլերին հանձնարարվեց կազմել նոր ընկերության կանոնադրութունը:

Հենց այստեղ ել վորոշվեց, վոր բոլոր հավաքույթներն ու նման յերեկույթները պետք ե խիստ գաղտնի պահվեն:

Տղաները բաժանվեցին զրգոված և ուրախ: Միայն մի տեսակ տարորինակ եր յերևում Ռակիտինը. նա մտածկոտ եր, շփոթված և սակավախոս:

— Դիմկա, ի՞նչ ե պատահել քեզ.— հետաքրքրվում եյին ընկերները:

— Ինձ դուր չի գալիս այս ամբողջ խաղը: «Սե թռչուններ», խորհրդավոր խմբակ, հորս մասին ինչ վոր շատ եր հարցուփորձ անում:

— Վերջ տուր, խնդրեմ, դու քո հիմար կասկած-

ներեց յերբեք ձեռք չես քաշում: Չես հավանում,— մի գա: Միայն անթ ե, վախեցար ընկերության մեջ մտնել, անա հիմա ել զանազան բաներ ես հնարում, վորպեսզի մի կերպ դուրս պրծնես:

Բայց Ռակիտինը չեւ վախենում: Վորպեսզի իր կասկածներն ստուգի, նա Կնեւլերների մոտ յեկավ նաև հաջորդ յերեկույթին:

Հենրիխի յեղբայրը հավաքվածներին կարգաց նոր ընկերության կանոնադրութունը: Կանոնադրութունը պահանջում եր խիստ գաղտնի պահել «Սե թռչունների» գոյութունը: Այնտեղ նույնպես ասվում եր, վոր ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր ե վորևե հերոսական բան կատարել, դրանով հաստատելով ընկերության անդամ լինելու իր իրավունքը:

Տղաները հուզվեցին:

Ուրեմն ի՞նչ, ի՞նչ պետք ե անել:

Կնեւլերը չեւ շտապում պատասխանել:

Նա մտածկոտ դիտում եր նրանց և, վերջապես,

նրա աչքերը կանգ առան Ռակիտինի վրա:

— Յես չգիտեմ, ինչ կանեն մյուսները, բայց անա Դիման կարող ե հերոսական գործ կատարել,— կարող ե ապացուցել մեր ընկերությանը ծառայելու իր պատրաստակամութունը: Թող ընկերությունը հանձնարարի ինձ և Հենրիխին խոսել Ռակիտինի հետ, իսկ հետևանքների մասին մենք կպատմենք:

Բոլորն աղմկածայն համաձայնվեցին:

Կանոնադրութունն ընդունվեց և բոլորը գնացին սեղանի մոտ տոնելու այդ հանգիսավոր զեպքը:

Յերբ Կնեւլերը ֆիաց Դիմայի հետ մենակ, նա

պարզ և լուրջ կերպով սկսեց խոսել նրան հանձնա-  
բարձրելիք գործի մասին:

— Իմ կարծիքով, Դմիտրի, դու պետք է դառ-  
նաս ընկերութեան նախագահը, դու խելացի տղա յես, և  
այս բոլորը դու կարող ես շատ նետաճրճիւր կերպով  
կազմակերպել: Սակայն դրա համար պետք է տղանե-  
րին ցույց տաս, վոր դու ընդունակ ես մեծ գործ կա-  
տարելու: Իմ գլխում մի շատ հետաճրճիւր միտք ծա-  
գեց, չգիտեմ, դու ինչպիսի կընդունես: Ինչ պետք է  
ընկերութեանը ներկայացնես մի վորևէ կարևոր փաս-  
տաթուղթ:

Ապա, մի յերկու ժամով վերցրու ձեր տանից  
հորդ գծագրերը: Չե՞ վոր այդ բոլորը նա տանն է  
թողնում:

Դիման լուսթյամբ գլխով արեց: Կնեկերը շարու-  
նակեց:

— Այդ լուրջ և պատասխանատու քայլն անմի-  
ջապես կբարձրացնի տղաների մոտ քո հեղինակու-  
թյունը, — իսկ դու անշուշտ, կընտրվես: Դիման ցած  
էր նայում, նա վախենում էր աչքերը վերև բարձ-  
րացնել:

«Ուրեմն, ճիշտ է, ուրեմն, նրա կասկածները  
Կնեկերների մասին ճիշտ դուրս յեկան»:

Նրա լուսթյունը համաձայնութեան տեղ ընդու-  
նելով, Կնեկերը բարեկամաբար խփեց նրա ուսին:

Ապա, հայդա պարիք, ապագա նախագահ:

Տղաներն այս անգամ ել ուշ բաժանվեցին:

Բայց Ռակիտինը այլևս վոչ մի բանի մասին  
ներանց հետ չէր խոսում:

Տուն գալով, մանրամասն բոլորի մասին հորը  
պատմեց:

Շուտով Կնեկերը բանտարկվեց: Նա խոստովանեց,  
վոր էր փոքր յեղբոր՝ Հենրիխի միջոցով նա ծանո-  
թություն էր հաստատում զպրոցականների հետ, վո-  
րոնց ոգտագործում էր զանազան պաշտպանական գոր-  
ծարաններում աշխատող նրանց ծնողների աշխատան-  
քի մասին լրտեսական տեղեկություններ ստանալու  
համար:

«Սե թուշունների ընկերությունն» ստեղծված էր  
նրա կողմից նրանց հավաքույթների գաղտնիքն  
ապահովելու համար: Միաժամանակ նա պետք է հեշ-  
տացներ լրտեսական տեղեկություններ ստանալու  
հնարավորությունը:

## ՊԱՌԱՎ ԿԻՆԸ

Մի քարե պատ ե բաժանում գործարանի մեծ շենքը նրա կողքին կանգնած բնակելի տներից: Պատի մեջ ամբացված ե դարպասը: Այս տանը բանվորներն են ապրում: Տունը գործարանի գլխավոր մուտքից բաժանող միջանի փողոցով չհրջեղու համար նրանք անցնում են այս դարպասով:

Դարպասի մոտ միշտ կանգնած ե պահակը՝ հրացանով: Տան բակում, հենց պատի մոտ մի փոքր հրուպարակի վրա տեղավորվել են բազմաթիվ բնակարանների փոքրիկ բնակիչները: Այստեղ նրանք վալեյբոլ եյին խաղում, թռչկոտում եյին գծաչրված դասարանների վրայով:

Բակում խաղացող յերեխաները պահակի հետ շատ մտերիմ եյին: Նրանք գիտեյին, վոր նրան հանձնարարված ե պահպանել գործարանը, ե յերբ նա իր պուտի վրա յե, նրա հետ խոսել չի կարելի: Բայց յերբեմն վալեյբոլ խաղալու ժամանակ գնդակը շատ բարձրը գցելիս ընկնում եր քարե պատի մյուս կողմը՝ գործարանի բակը: Յեվ այն ժամանակ հրացանով մարդը հանդիմանաբար որորելով գլուխը, ասում եր.

— Ապա, հայա գնդակի հետևից, մի վայրկյանում վերադառնալ:

Ուղացողներից վորևե մեկը նետի նման սլանում եր դարպասից ներս ե միջանի բոպե հետո հրապարակ եր վերադառնում պնդակը ձեռքին:

Աշնանային տաք որ եր: Դպրոցից վերադարձած յերեխաները թափվել եյին բակը: Բոլորի հետ վազում եր տասնմեկ տարեկան Սվետլանան: Թռչկոտելով, վազում եր գնդակի հետևից: Հետո սկսեցին տափկընոցի խաղալ: Սվետլանան ամենից շատ սիրում եր այդ խաղը: Նա միշտ այնպիսի տեղ եր թագնվում, վոր վոչ վոք նրան գտնել չկարողանա:

Հենց պատի ձախ կողմում գտնվում ե բակի մուտքի դուռը: Ծուռ ու մուռ սանդուխքները տանում են ներքև, խոնավ ե մութ նկուղը:

Մեկ, յերկու, յերեք: Սվետլանան թափով իրեն շարտեց դեպի մուտքի դուռը, հետո՝ սանդուխքներով ներքև:

«Ինչպես ցուրտ ե, խոնավ: Բայց ինչ ե այս: Այստեղ ինչ վոր մարդ կա»:

Սանդուխքների ներքևի աստիճանի վրա նստած եր մի պառավ կին: Նրա գլուխը կապած եր թաշկինակով, իսկ ինքն ամբողջապես կնճառոված: Այդպիսի պառավ կանանց Սվետլանան տեսել եր միայն այն ժամանակ, յերբ մոր հետ անցնում եր յեկեղեցու մոտով:

— Փոքրիկս, սիրելիս, անընդհատ վազում ես, խաղում, — ասաց պառավը, դիմելով Սվետլանային: — Իսկ յես ահա, շատ եմ ձերացել, մտա վորդուս մտա, իսկ նա չկա, բնակարանը փակ ե, ահա նստել եմ, հանգստանում եմ, սպասում, թե յերբ կգա:

Սվետլանան ուշադրությամբ դիտում եր պառավին, նա բոլորովին չեր վախենում: Միայն տանջում եր նրան հետաքրքրությունը: Ինչու նա հանգստանաեւր համար իջել ե նկուղը, վորտեղ այնքան ցուրտ ե, խոնավ, կեղտոտ: Ինչ՞ու նա բակ չի գնում, փողոց, վորտեղ այնպես ուրախ ե, շատ արև կա, տաքություն:

Պառավը գուրս յեկավ բարի և զրուցասեր մի կին: Բրքերելով գրպանը, նա Սվետլանային մեկնեց մի կանֆետ, և ինչպիսի կանֆետ— «Միշկա»: Աղջիկն այդ կանֆետներն անչափ սիրում էր:

Մինչ այդ պառավն իր նստած աստիճաններից բարձրանում էր: Նա փոքր էր, ամբողջապես սև հագած:

Նրա մատներն ամբողջ ժամանակ շարժվում էին: «Ինչպես փոքրիկ սարգեր», մտածում էր Սվետլանան:

Պառավը մոտեցավ աղջկան և սկսեց փաղաքշիք նրա պուտիլը: Յեվ այդ շփումից ինչ վոր անգուրեհկանքան զգաց: Սվետլանան մի կողմ քաշվեց:

— Փոքրիկս, սիրելիս, ի՞նչ տուն ե այդ, ձեր տան կողքին:— Շարունակեց իր հարց ու փորձը պառավը:

Սվետլանան ապշեց: Ի՞նչպես այս պառավը չգիտեր վոր այնտեղ գործարան է: Յեվ շտապեց նրան բացատրել:

— Իսկ ինչու քեռին զարպասի մոտ հրացանով է կանգնած:

Սվետլանան թոթվեց սևերը:

— Չէ վոր այդ պահակն է, նա պահպանում է գործարանը:

— Յեվ վոչ վոքի այնտեղ չի թողնում:

Աղջիկն ուզեց հպարտանալ:

— Ինչ թողնում է:

— Վե՞ց չե, — անմատահ ժպտաց պառավը:

— Վե՞ց, թողնում է, թողնում:— Տաքացած ասաց Սվետլանան:

— Սա կթողնի, իսկ ներսում, հանդիստ յեղիք, մի ուրիշ պահակ է կանգնած, յերբ տեսնի քեզ, գուրս կանի:

Սվետլանան արեամարեանքով ձեռքը թափ տվեց: — Վոչ, չի տեսնի: Նա հեռու, մյուս պատի մոտ է կանգնած:

— Յեվ բակում ուրիշ վոչ վոք չկա:

Քիչ էր մնում պատասխանը բերանից դուրս թռչելու: Բայց Սվետլանան իրեն պահեց: Նա հիշեց, վոր հայրը նրան ասել է, և դպրոցում էլ նրան նախազգուշացրել են, վոր ոտար, անծանոթ մարդկանց հետ խոսելիս պետք է զգուշ լինել:

Քիչ էր մնում աղջիկը լաց լինելու: Առանց այն էլ նա շատ էր շատախոսել: Ուզում էր գնալ վերև, յերեխաների մոտ:

— Տատիկ, դու սպասիր: Յես հիմա կվազեմ վերև, կաղատվեմ և նորից կգամ, կթագնվեմ,— բարձր ձայնով ասաց նա և սլացավ վերև, թռչկոտելով միջանի աստիճաններից:

Ահա նա նորից բակումն է: Խավար նկուղից հետո արևը խփեց նրա աչքերին և մի վայրկյանում նա կուրացավ: Սվետլանան վազելով գնաց յերեխաների մոտ: Հուզմունքից դողդոցացող ձայնով նա պատմեց պռուսկին հետ հանդիպման մասին, նրա հարցաքննու-թյան մասին: Վորպես ապացույց ցույց տվեց «Միշկան»:

Յերեխաներն ուշադրությամբ լսեցին:

— Ա՛յ, թե շատախոս է հա՛.— ասաց նրանցից մեկը:

— Սպասի՛ր,— կանգնեցրեց նրան տասնչորս տարեկան Վալոդյան:— Սվետլանա, դու նորից գնա նկուղ, իբր թե նորից տափկնոցի յես խաղում, իսկ յես հիմա կգնամ մի տեղ, կպատմեմ:

Սվետլանան չէր ուզում նորից հետ գնալ: Այժմ

արդեն նա վախենում եր պառավից, բայց հասկացավ Վոր այդ անհրաժեշտ ե և դանդաղ կերպով դնաց դեպի նկուղը:

Բայց նա այլևս ցած չիջավ: Պառավը արագ քայլվածքով և շուրջը դիտելով շտապում եր դեպի նա:

Հենց դարպասների մոտ նրան ձերբակալեցին:

Ինչպես հետո պարզվեց, պառավը, իհարկե, իզուր չեր նկուղ մտել, իզուր չեր փորձում գոռով խմանալ Վորտեղ են կանգնում պահակները:

Այդ պառավը մասնակցում եր լրտեսական մի կազմակերպության, վորը պատրաստվում եր գործարանը պայթեցնել:

Նրանք ուղում եյին նկուղից գործարանի քարե պատի տակ ստորերկրյա անցք փորելը Հանցագործները՝ հաջողության համար պետք ե պարզեյին՝ թե ինչպես ե կազմակերպված գործարանի պահպանությունը, վորտեղ են կանգնում պահակները:

Այդ զազրելի հանցագործությունը խափանվեց շնորհիվ յերեխաների զգոնություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	52
1. Հրատարակչության կողմից . . . . .	3
2. Վրոտայնը . . . . .	5
3. Խափանված խաղ . . . . .	12
4. Յերիտասարդ ինժեների պատմածը . . . . .	18
5. Մոր հիշատակը . . . . .	25
6. Դասատուն . . . . .	26
7. Տիկնիկը . . . . .	31
8. Խուլունամբը . . . . .	34
9. Զորկան . . . . .	37
10. Քեռի կարուջան . . . . .	44
11. Փաթեթով անծանոթը . . . . .	48
12. Անընդունակ աշակերտուհին . . . . .	53
13. «Ան թոչուններ» . . . . .	56
14. Պառավ կինը . . . . .	62



Գառ. խմբագիր՝ Ա. ՂԱՐՆՆՑ  
Տեխ. խմբագիր՝ Ա.Ն. ԳԱՍՂԱՐՑԱՆ  
Սրբագրելի՝ Խ. ԱՅՂԱԶՅԱՆ  
Կոնսորց սրբագրելի՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Իլազիտի լիազոր՝ Ե 1316 Հրատ. № 4775

Գառվեր 34: Տիրած 4000.

Հանձնված է արատորոշյան 15 հունվորի 1939 թ.

Ստորագրված է ազատության համար 26 հոկտեմբերի 1939 թ.

Գեներալ Զ-բգ ողորան: Յերեան, Նալբանդյան 5

«Ազգային գրադարան



NL0398061

ԳԻՆԸ 1 Ո.

3294

2948

ՅԻՆՎԵՐ  
ԲՅԻՒՆ ԱՆՉԵԿՍԻ  
ԳԻՅ ԱՐՄ ՍՏՐ ԵՐԵՎԱՆ 1939